

ՄԵՐ ԱՆԿԻՒՆԸ

Դրական Ազդակներ Թե՞ Դիւանագիտական Խաղեր

Հայաստանի Կառավարութեան վերջին նիստին վարչապետ Նիկոլ Փաշինեան յայտարարեց, որ տարածաշրջանային խաղաղութեան առումով թուրքիոյ կողմէ կան որոշ դրական ազդակներ: «Սենք այդ ազդակները կը գնահատենք եւ ազդակներին դրական ազդակով կը պատասխանենք», ըսաւ վարչապետը, որուն խօսքերը որոշ չափով անակնկալ էին, մանաւանդ որ, թուրքիոյ կողմէ որեւէ յայտարարութիւն չէր եղած մինչ այդ: Սակայն, մի քանի օր ետք, նախագահ Ռեջեփ Էրտողանի մէկ մամուլային ասուլիսի ընթացքին, այդ մասին հարց տրուեցաւ թուրքիոյ ղեկավարին ու ան բաւական երկար ձեւով պատասխանեց այդ հարցին ըսելու համար, թէ իրենք պատրաստ են կարգաւորելու յարաբերութիւնները Երեւանին հետ՝ բարի դրացիութեան եւ իրարու տարածքային ամբողջականութեան ճանաչման հիման վրայ: Երտողանի յայտարարութեան մէջ խօսք չկար նախապայմաններու մասին, որոնք անցեալին միշտ ալ հնչած են պաշտօնական Անգարայի կողմէ, կապուած Ղարաբաղեան հարցին եւ Ցեղասպանութեան ճանաչման հետ:

Երկուստեք այս յայտարարութիւնները անմիջապէս յիշեցուցին 2009 թուականի Սեպտեմբերին Ձիւրիխի մէջ ստորագրուած Հայ-թրքական հաշտութեան պայմանագիրը, ուր եւս չկային նախապայմաններ: Ժամանակ մը ետք սակայն, Անգարա սկսաւ խօսիլ Ցեղասպանութեան ճանաչման արշաւը դադարեցնելու եւ դարաբաղեան հարցը լուծելու մասին: Բնականաբար այդ նախապայմանները ընդունելի չէին Հայկական կողմին համար: Թուրքիոյ խորհրդարանը երբեք ալ քննարկման առարկայ չդարձուց այդ փաստաթուղթը ու չվաւերացուց զայն, ստիպելով Երեւանին հրաժարելու այդ համաձայնութենէն:

Ներկայիս հարց կը յառաջանայ թէ, արդեօք Անգարա անկեղծ է, երբ կը յայտարարէ թէ պատրաստ է կարգաւորելու յարաբերութիւնները Հայաստանի հետ: Իսկ, Երտողանի ակնարկը՝ իրարու տարածքային ամբողջականութեան ճանաչման մասին կը վերաբերի միայն Հայաստան-թուրքիա սահմանին, թէ՛ կ'ընդգրկէ նաեւ Ատրպէյճանի «հողային ամբողջականութիւնը»: Ատրպէյճանի համար այդ կը նշանակէ իր սահման-

Լաւրով Կոչ Կ'ընէ Ատրպէյճանին Վերադարձնելու Բոլոր Հայ Գերիները՝ Առանց Նախապայմանների



Ռուսաստանի եւ Հայաստանի արտաքին գործոց նախարարները Մոսկուայի մէջ կայացած մամուլային ասուլիսի ընթացքին

«Ռուսաստանը տարբեր մակարդակներով Ատրպէյճանի հետ շփումներու ընթացքին կոչ կ'ընէ վերադարձնելու հայ ռազմագերիները առանց նախապայմանների»:

«Արմէնիքէսի» հաղորդմամբ՝ Մոսկուայի մէջ ՀՀ Արտաքին Գործոց նախարար՝ Արարատ Միրզոյեանի հետ համատեղ ասուլիսի ընթացքին այս մասին ըսաւ Ռուսաստանի ԱԳ նախարար՝ Սերկէյ Լաւրով:

Լաւրով նախ ընդգծած է, որ

Նոյեմբեր 9-ի եռակողմ յայտարարութեան մէջ խօսք կար այն ռազմագերիներու մասին, որոնք գերեզման մէջ էին այդ պահուն:

«Այս պահուն ատրպէյճանցիները հայ գինձառայողներու նշանակալի խումբ մը կը պահեն, որոնք այնտեղ յայտնուած են Նոյեմբերի վերջը, երբ յայտարարութիւնը ուժի մէջ մտած էր եւ պայմանաւորուածութիւն ձեռք բեր-

Տեղի Ունեցաւ ՀԿԲՄ-ի Կրթանպաստի Տարեկան Միջոցառումը



ՀԿԲՄ-ի կրթանպաստի յանձնախումբի անդամներն ու պարգևներու արժանացած ուսանողները

Հայկական Կրթական Բարեփոխական Միութեան՝ ՀԿԲՄ-ի տարեկան միջոցառումը տեղի ունեցաւ Կիրակի, 29 Օգոստոսի, 2021, կէսօրէ առաջ ժամը 11:00ին «Պրանչ»-նախաճաշի ձեռով, կազմակերպութեան փաստաթղթի կեդրոնի սրահէն ներս:

Հակառակ Համավարակի սահմանափակումներուն աւելի քան հարիւր հրաւիրեալներ ներկայ եղան

սոյն հաւաք-ճաշկերոյթին: Ներկայ էր նաեւ Հայաստանի աւագ հիւպատոս, դեսպան Տիար Արմէն Բալբուրդեան իր ազնուփայլ տրիկոնով իվեթի ընկերակցութեամբ, ինչպէս նաեւ ՄԴՀԿ-ի Շրջանային եւ Կեդրոնական վարչութեանց, Նոր Սերունդ Մշակութային Միութեան ու Հ.Մ.Մ.ի ղեկա-

Երտողան Խօսած է Երեւանի Հետ Յարաբերութիւնները Կարգաւորելու Մասին



Թուրքիոյ նախագահ Ռեջեփ Էրտողան

Թուրքիոյ նախագահը յայտարարած է, թէ Անգարան պատրաստ է կարգաւորել յարաբերութիւնները Երեւանին հետ՝ բարի դրացիութեան եւ իրարու տարածքային ամբողջականութեան ճանաչման հիման վրայ: Ռեջեփ Էրտողան այս մասին ըսած է Օգոստոս 29-ին Չեռնոկորիոյ մէջ, երբ լրագրողը հետաքրքրուած է, թէ ինչպէս Անգարան արձագանգած է Հայաստանի վարչապետի վերջին յայտարարութեան, թէ Երեւանը դրական ազդակներ ստացած է Թուրքիայէն եւ համապատասխանաբար կ'արձագանգէ:

Ի պատասխան՝ Էրտողան յոյս յայտնած է, թէ Հայաստանի նոր կառավարութեան գործունէութիւնը օգտակար է տարածաշրջանին համար: «Մեր տարածաշրջանին մէջ նոր եւ կառուցողական մտեցումներու կարիք կայ: Չնայած կարծիքներու եւ ակնկալիքներու տարբերութիւններ կան, բայց վստահութեան հիման վրայ բարի դրացիական յարաբերութիւններ զարգացնելու անկեղծ ջանքերու գործադրումը պատասխանատու մտեցում կ'ըլլայ՝ հիմնուած իրարու տարածքային ամբողջականութեան եւ ինքնիշխանութեան ճանաչման վրայ», - ըսած է Էրտողան:

Նշելով, որ նորագոյն պատմութիւնը պէտք է թշնամանքի աղբիւր ըլլայ, եւ որ պէտք է կառուցողական քայլեր ձեռնարկուին կայուն խաղաղութեան եւ համակեցութեան համար, Էրտողանը ըսած է. «Եթէ Երեւանը պատրաստ է շարժուիլ այդ ուղղութեամբ, Անգարան կրնայ սկսիլ աշխատանքը Հայաստանի հետ յարաբերութիւններու աստիճանական կարգաւորման ուղղութեամբ: Ժամանակն է կայունութիւնը եւ խաղաղութիւնը դարձնել մշտական, եւ պայմաններ ստեղծել տնտեսական զարգացման եւ տարածաշրջանային համագործակցութեան համար»: Էրտողան ընդգծած է, որ

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Հայկական Բանակը Կայ եւ Չի Համակերպուել Կրած Պարտութեան Հետ.

Մեկնարկել են ՊՆ Եռամսեայ Վարժական Հաւաքները

ԱՐԱՍ ՍԱՐԳՍԵԱՆ

Հայաստանում մեկնարկել են պահեստազորայինների եռամսեայ վարժական հաւաքները, որոնք, բնականաբար, մեծ հետաքրքրութիւն են առաջացրել հանրութեան շրջանում եւ լայն քննարկման առարկայ դարձել՝ հաշուի առնելով անվտանգութեան այն մարտահրաւէրներն ու սպառնալիքները, որոնց Հայաստանը առերեսուել է պատերազմից յետոյ: Պատերազմի մասնակիցներից ու պահեստազորայիններից շատերը կոչ են անում հայրենակիցներին պատասխանատուութեամբ վերաբերուել հաւաքներին եւ հաշուի առնել, որ ստեղծուած իրավիճակում ինքնապաշտպանական եւ ռազմական հմտութիւններն ունենալն ու պահպանելը՝ յանուն հայրենիքի պաշտպանութեան եւ հարազատների անվտանգութեան ապահովման, բացարձակ հրամայական է Հայաստանի ամէն մի քաղաքացու եւ յատկապէս իւրաքանչիւր պահեստազորայինի համար: Այս հարցում, իհարկէ, կարեւոր դեր են խաղում զորավարժութիւնները:

Անդրադառնալով թեմային՝ ռազմաքաղաքական վերլուծաբան Մհեր Յակոբեանը «Արմենփրես»-ի հետ զրոյցում պարզաբանեց, որ եռամսեայ վարժական հաւաքների հիմնական եւ ամենաակնյայտ նպատակը պահեստազորի մարտունակութիւնը բարձրացնելն է:

«Մինչ այժմ մարդկութիւնը չի յորինել աւելի լաւ բան, քան պահեստազորին պարբերաբար

մարզելը, զէնքի նոր տեսակներին ծանօթացնելը, կազմակերպչական խնդիրներին լուծում տալը, մարդկանց ընդհանուր ֆիզիքական վիճակը կարգաւորելը եւ այլն», - «Արմենփրես»-ին ասաց Յակոբեանը:

Բացի այդ, վարժական հաւաքները, վերլուծաբանի կարծիքով, ունեն նաեւ քաղաքական բացառիչ, որով Հայաստանը թշնամուն ցոյց է տալիս, որ հայկական բանակը կայ, չի համակերպուել կրած անյաջողութեան հետ եւ պատրաստ է վերականգնել իր դիրքերը:

Շեշտելով հաւաքների այժմէականութիւնն ու կարեւորութիւնը՝ Մհեր Յակոբեանը միաժամանակ ընդգծում է, որ խնդիրը ոչ միայն վարժանքներ, ուսումնական հաւաքներ կամ զորավարժութիւններ անցկացնելն է, այլեւ դրանք որակով անելը:

Յակոբեանի խօսքով՝ համապատասխան մարմինները պէտք է շատ լաւ կազմակերպեն ամէն ինչ, որպէսզի, նախ, ուսումնական գործընթացը հաւաքների ժամանակ լինի հնարաւորինս արդիւնաւէտ, եւ երկրորդ, պահեստազորայիններն էլ յետագայում շահագրգռուած լինեն մասնակցելու հաւաքներին ոչ թէ պարտադրանքի ուժով, այլ սեփական ցանկութեամբ եւ գիտակցութեամբ:

«Այս առումով լուրջ գործ կայ անելու, բայց խնդիրն այն է, որ հաւաքները նոր են սկսուել, եւ մենք չգիտենք՝ ինչ է կատարուում: Երբ մարդիկ հետ կը գան, որոշ

տեղեկութիւններ կը հրապարակուեն, Պաշտպանութեան նախարարութիւնը ինչ-որ բաներ կը պարզաբանի, այդ ժամանակ էլ կը հասկանանք, թէ ինչպէս են անցել հաւաքները եւ ինչ արդիւնքներ են տուել», - ասում է Մհեր Յակոբեանը՝ յոյս չայտնելով, որ հաւաքները չեն վերածուել ձեւականութեան, այլ կը ծառայեն իրենց նպատակին:

Վերլուծաբանը նաեւ առաջարկում է քննարկել հաւաքների եռամսեայ ժամկէտի հարցը: Ըստ նրա՝ դուրսէ աւելի արդիւնաւէտ կը լինէր ոչ թէ տարուայ մէջ մէկ անգամ երեք ամսով, այլ աւելի կարճ տեւողութեամբ, սակայն աւելի յաճախակի հաւաքներ անելը: Թէեւ միւս կողմից Մհեր Յակոբեանն ընդունում է, որ գիտութիւններն էլ իրենց մօտեցումն ունեն այս հարցում:

Ջրուցակցի խօսքով՝ եթէ գերակշռելի լինէր զուտ ուսումնական գործընթացը, ապա կարելի էր ոչ միայն կարճ անել, այլեւ ապահովել մասնակիցների՝ երեկոցեան տուն գնալը, ուսումնական գործընթացը օրումէջ անել, մի խօսքով՝ այնպէս կազմակերպել հաւաքները, որ մասնակիցները չկտրուեն իրենց սոցիալական միջավայրից: Բայց հարցն այն է, որ գիտութիւններն իրենց բնոյթով պահպանողական մարդիկ են եւ ուզում են, որ «գիտութիւնը իրենց աչքի առաջ լինի, զօրանցում քնի, առաւօտեան գայ դասի, քան թէ երեկոցեան գնայ տուն, առաւօտեան ժամը 9-ին չհասցնի վերա-

դառնալ»: Իսկ այդ դէպքում, բնականաբար, կազմակերպչական միջոցառումների կարիք է լինելու:

«Բայց եթէ ընդունենք, որ հաւաքները մարտական բաղադրիչ էլ են ունենալու, դրա մասին յստակ չասուեց, ուղղակի յայտարարուեց, որ «անհրաժեշտութեան դէպքում կարող են ներգրաւուել», ապա այդ պարագայում պարզ է, որ երեկոցեան գիտութիւններին տուն թողնելը այդքան էլ նպատակաւոր մարտիչ է: Ամէն դէպքում կարծում եմ, որ երեք ամիսը շատ է: Գուցէ կարելի էր այդ երեք ամիսը բաժանել մէկ կամ նոյնիսկ երեք տարուայ ընթացքում երկու շաբաթ տեւողութեամբ հաւաքների: Բայց սա ընդամենը իմ կարծիքն է», - ասաց Մհեր Յակոբեանը:

ՀՀ Պաշտպանութեան նախարարութիւնը յայտարարել էր 2021 թ. Օգոստոսի 25-ից մինչեւ Նոյեմբերի 25-ը պահեստազորի առաջին խմբի առաջին կարգում հաշուառուած շարքային, ենթասպայական եւ սպայական կազմերի պահեստազորայինների եռամսեայ վարժական հաւաքներ անցկացնելու մասին: Հաւաքներին կը ներգրաւուել ընդհանուր մինչեւ 2169 քաղաքացի, որոնցից 1164-ը՝ շարքային կազմի, 254-ը՝ ենթասպայական կազմի, 751-ը՝ սպայական կազմի պահեստազորայիններ՝ մոտահրաձգային, հրթիռահրետանային, կապի, հետախուզական, ինժեներական մասնագիտութիւններով:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ»

Հայաստանի Շուրջ Մեծ Խաղը Դեռ Առջեւում Է

ՅԱԿՈԲ ԲԱԴԱՆԵԱՆ

Ղարաբաղեան հիմնահարցը երբեք չէր լուծուի խաղաղ ճանապարհով, յայտարարել է Պաքուի ղեկավար Ալիեւը, ասելով, թէ դա ցոյց է տուել բանակցային գործընթացի երեք տասնամեակը: Մի կողմ թողնենք բանակցային երեք տասնամեակի ալիեւեան գնահատականը ու եզրակացութիւնը: Ներկայումս աւելի կարեւոր է դրանում պարունակուող ներկայի եւ փաստօրէն ապագայի ազդակը: Իսկ այդ իմաստով, Ալիեւը խօսում է այն մասին, որ Արցախի կարգավիճակի եւ այլ չլուծուած հարցերի լուծում կարող է լինել միայն նոր պատերազմով: Ասել կ'ուզի, նա չի համաձայնի որեւէ քաղաքական, բանակցային լուծման, չի համաձայնի որեւէ կարգավիճակի, որը կարող է ենթադրել Արցախի ինքնորոշում: Այստեղ անշուշտ զարմանալի ոչինչ էլ չկայ: Եթէ Ալիեւը լինէր դրան համաձայնելու ունակ, մի շարք առումներով, ապա համաձայնութիւն կը լինէր օրինակ Կազանում, կամ աւելի վաղ:

Ալիեւը կարգավիճակի հարցում քաղաքական համաձայնութեան պատրաստ չէ նոյնիսկ պատերազմից յետոյ, երբ թուում է, թէ «լուծել» է տարածքների հարցը: Ընդ որում, յետպատերազմեան շրջանում մի քանի առիթներով գրել եմ եւ խօսել, որ Արցախի կարգավիճակի եւ Ալիեւի իշխանութիւնի հասկացութիւնները անհամատեղելի են: Արցախի կարգավիճակի հարցի լուծումը, Ար-

ցախի ինքնորոշումը հաւասարագոր է լինելու Ալիեւի իշխանութիւնից հեռանալուն: Հակառակ պարագայում, կամ նա նոր պատերազմով կը փակի նաեւ ինքնորոշման հարցը, կամ հայկական կողմերը նոր պատերազմով են լուծելու կարգավիճակի եւ Արցախի տարածքների դեօկուպացիայի հարցը: Կամ, ուժային կեդրոնները կը պարտադրեն կարգավիճակ՝ ըստ այդմ փաստօրէն նաեւ Ալիեւին պարտադրելով հրաժարական: Ընդ որում, տեսականում իհարկէ պէտք է քացառել եւ այդ տարբերակը եւ կասկած չկայ, որ Ալիեւը կարող է նաեւ պատրաստուել դրան, այսինքն՝ ծայրայեղ դէպքում իշխանութիւնից հեռանալուն, եթէ չունենայ պատերազմով հարց լուծելու հնարաւորութիւն, կամ եթէ բախուի ուժային խոշոր կենտրոնների, Միսկի խմբի երեք համանախագահների միասնական պահանջին եւ չունենայ դիմադրութեան հնարաւորութիւն, իսկ էրզրդանն էլ կամ չլինի, կամ չկարողանայ օգնել: Բոլոր դէպքերում, առանցքային ազդակը այն է, որ Ալիեւը խաղաղ տարբերակով երբեք չի համաձայնելու կարգավիճակի, ինքնորոշման, ինչի մասին խոսել եմ բազմիցս: Ըստ այդմ, Հայաստանն Արցախի կարգավիճակի համար պէտք է

պատրաստ լինի պատերազմի: Դա չի նշանակում, որ Հայաստանը պէտք է պատերազմ սկսի կարգավիճակի համար: Հայաստանի պատերազմի պատրաստ լինելը ունի մէկ նպատակ՝ գոնէ հնարաւոր ռիսկի պարագայում թոյլ չտալ, որպէսզի Ալիեւը նոր պատերազմով աւարտի այն, ինչ տարբեր հանգամանքներից էլինելով կիսատ է մնացել նրա համար 44-օրեայ պատերազմով:

Հայաստանը պարտաւոր է մի կողմից ամրանալ քաղաքականապէս՝ պատերազմի նոր ռիսկերի գեներացում թոյլ չտալու համար, միւս կողմից ամրանալ ռազմական առումով՝ Ատրպէյջանին առաւելութեան գագացում չտալու համար: Ընդ որում, երկրորդ տարբերակի ամրութիւնն է հասնելու պայմանաւորելու առաջինի էֆեկտիւութիւնը: Բուն հարցը անշուշտ ռազմատեսչութիւնը չէ եւ Հայաստանը պէտք է շարունակի առաջնահերթութիւն դիտարկել խաղաղութիւնը, որովհետեւ հազիւ թէ նոր պատերազմի հեռանկարը նպաստի Արցախում հայկական բնակչութեան պահպանմանը, ինչը հիմնարար նշանակութեան հարց է: Հայաստանի համար պատերազմի պատրաստ լինելը պարզապէս խաղաղութեան թիւ մէկ գրաւական է:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնեւորուում արտայայտուող բոլոր միտքերը



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՄՈՑԻՍՍ ԴԵՄՈԿՐԱՏԻ ՅՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԷ ԱՋԱՊԱՐՅԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To **MASSIS WEEKLY**

ԼՈՒՐԵՐ

Դատախազը Միջնորդեց Բեկանելու Մարտ 1-ի Գործով Քոչարեանը Արդարացնելու Որոշումը

Գլխավոր դատախազի տեղակալը Օգոստոս 30-ին վերաքննիչ դատարանին ներս ներկայացուց դատախազութեան բողոքը՝ խնդրելով բեկանել Մարտ 1-ի գործով Ռոպերթ Քոչարեանը արդարացնելու որոշումը եւ գործը վերադարձնել դատարան նոր քննութեան:



Դատախազի տեղակալ Գեորգ Պաղտասարեան

Մարտ 1-ի գործով տուժողներն ու գլխավոր դատախազութիւնը կը վիճարկեն Հայաստանի երկրորդ նախագահը եւ անոր նախկին ենթակաները արդարացնելու առաջին ատեանի որոշումը: Քոչարեանն ու միւսները այսօր դատարան չէին եկած:

«Միջնորդում եմ Երեւան քաղաքի ընդհանուր իրաւասութեան դատարանի 2021 թուականի Ապրիլի 6-ի որոշումը բեկանել, քրէական գործն ուղարկել նոյն դատարան՝ նոր քննութեան», - ներկայացուց դատախազ՝ Գեորգ Պաղտասարեան:

Պաղտասարեան կրկին պնդեց դատախազութեան դիրքորոշումը, որ 2008-ի յետընտրական արիւնալի իրադարձութիւններու գործով արդարացուած Ռոպերթ Քոչարեանի ու անոր նախկին երեք ենթականերու արարքները չեն դադարի դոյութիւն ունենալէ, անոնց պէտք է մեղադրանք առաջադրել պաշտօնական լիազօրութիւններ անցնելու համար:

Ծաւալուն միջնորդութեան մէջ գլխավոր դատախազի տեղակալը շեշտադրեց նաեւ տուժողներու

իրաւունքներու հարցը: Ծուրջ երկու տարի քննելով այս գործը՝ Ապրիլի 6-ի Երեւանի ընդհանուր իրաւասութեան դատարանը կարճած էր զայն՝ հիմնուելով Սահմանադրական դատարանի որոշման վրայ:

Բարձր դատարանը անվաւեր եւ հակասահմանադրական գտած էր Քոչարեանին ու միւսներուն առաջադրուած սահմանադրական կարգը տապալելու մասին յօդուածը:

Այժմ առաջին ատեանի դատարանը կը քննէ միայն գործարար՝ Սիլվա Համբարձումեանի բողոքի հիման վրայ յարուցուած կաշառքի գործը, որով մեղադրեալ են նախկին նախագահն ու անոր աշխատակազմի նախկին ղեկավարը:

Խաչատուր Սուքիասեան կը Պնդէ, Որ Սերժ Սարգսեանը 100 Միլիոն Տոլար Կորսնցուցած Է Խաղատուներու Մէջ

Իշխանական պատգամաւոր՝ Խաչատուր Սուքիասեան կը շարունակէ յայտարարել, թէ Հայաստանի երրորդ նախագահ՝ Սերժ Սարգսեան 100 միլիոն տոլարէն աւելի գումար կորսնցուցած է խաղատուներու մէջ:



Պատգամաւոր՝ Խաչատուր Սուքիասեան

«Մեր պետական օդանաւը եկել է համապատասխան տեղից, որտեղ քաղինօ կայ, էստեղից գումարները տոպրակներով տարել են, որ վճարեն: Կարող ես խաղալ, յետոյ վճարել», - ըսած է պատգամաւորը:

Պատգամաւորը կը պնդէ, որ ըսածը հիմնաւոր է, սակայն ապացուցներ չի հրապարակեր: Պատգամաւորը լրագրողներու հետ ձեպագրոյցի ընթացքին նաեւ այլ մեղադրանքներ հնչեցուց Հայաստանը 2008-2018 թուականներուն ղեկավարած Սարգսեանի, անոր վարորդի եւ թիկնազօրի պետ եղած Վաչական Ղազարեանի հասցէին ապօրինի հարստութիւն կուտակելու համար:

Սուքիասեանի խօսքով՝ ինքը դեռ աւելի քիչ գումար նշած է, որպէսզի աւելի ապացուցելի ըլլայ իր ըսածը: Պատգամաւորը երէկ Ազգային ժողովի ամպլոնէն կը մեղադրէր Սարգսեանը:

Իշխանական պատգամաւորի՝ երրորդ նախագահին հասցէին հնչեցուած մեղադրանքներու վերաբերեալ Սարգսեանի փաստաբանը հերքում պահանջող հայցի յարուցում կը նախատրամադրէ: Սուքիասեանի պնդումը Ամրամ Մակինեան կ'որակէ որպէս Սերժ Սարգսեանի բարի համբաւը արատաւորող ակնյայտ զրպարտչական տեղեկութիւն:

Սուքիասեան նաեւ մեղադրանքներ հնչեցուց երրորդ նախագահի փեսայ՝ Միքայէլ Մինասեանի հասցէին. «Փեսան կամ գլխավոր բժշկի տղան դառնում է տասնեակ հզոր կառուցների սեփականատէր: Ձեզ հարց եմ տալիս՝ էտ ի՞նչ, բա ինչո՞ւ չի տիեզերքում մի բան ձեւաւորում, բա ինչի՞ մի հատ այլ երկիր չի բերում, կպցնի Հայաստանին: Տենց շատ արագ մարդը կարա՞յ կարելոր կառուցների սեփականատէր դառնայ»:

Բազմաթիւ ձեռնարկութիւններու սեփականատէր Խաչատուր Սուքիասեանի յայտարարութեան նաեւ Հայաստանի հանրապետական կուսակցութեան փոխնախագահ՝ Արմէն Աշոտեանը անդրադարձած է: Աշոտեանը հեռավար հարց ուղղած է Սուքիասեանին՝ թէ 90-ականներուն ինչպէ՞ս հարստացած է գործարարը, ո՞րու հետ ունեցած բարեկամական կապի շնորհիւ:

Կառավարութեան Ծրագիրը Արժանացաւ Խորհրդարանի Հաւանութեան



Պատգամաւորներու մասնակցութեամբ քաջբռնութեամբ Ազգային ժողովէն Անր

«Չնայած ներքին ու արտաքին սադրանքներին՝ Հայաստանը չպէտք է շեղուի իր ռազմավարական գծից, որն է՝ բոլոր միջոցները ձեռնարկելով պահպանել երկրի ինքնիշխանութիւնն ու տարածքային ամբողջականութիւնը եւ առաջ գնալ խաղաղութեան օրակարգով», այսօր՝ Օգոստոս 26-ին, խորհրդարանին ներս կառավարութեան ծրագրի քննարկման եզրափակիչ ելոյթին յայտարարեց Նիկոլ Փաշինեան:

«Բայց մենք պէտք է յստակ արձանագրենք, որ մենք առաջ ենք գնում խաղաղութեան օրակարգով: Այո, մենք յստակ պէտք է արձանագրենք, որ մենք մեր զինուած ուժերը բարեփոխում ենք ոչ թէ տարածքներ նուաճելու, այլ ինչպէս խաղաղասէր ցանկացած պետութիւն, իր ինքնիշխան տարածքը պաշտպանելու համար: Մենք յարձակողական մտադրութիւններ չունենք մեր տարածաշրջանի որեւէ պետութեան հանդէպ, եւ մենք սա յստակ պէտք է արձանագրենք», - յայտարարեց վարչապետը:

Ըստ Փաշինեանին, Ազգային ժողովի դահլիճը ներկայ եղող որոշ ուժերու կողմէ փորձ կատարուած էր տպաւորութիւն ստեղծել, թէ սահմաններու սահմանազատումն ու սահմանագծումը Հայաստանին պարտադրուող օրակարգ է, մինչդեռ երբ Հայաստանը յայտարարեց, որ պատրաստ է եւ շահագրգռուած է այդ գործընթացով, Ատրպէյճանի արձագանքը չուշացաւ:

«Զէ՞ք նկատել, որ այլեւս Պաքուից չեն հնչում յայտարարութիւններ սահմանազատման եւ սահմանագծման մասին, ընդհակառակը՝ փորձ է արւում այդ օրակարգից դուրս բերել այդ հարցը: Մեր երկրի առաջ կանգնած մարտահրաւէրներն այսօր աւելին

են, քան կարելի է այս ամպլոնից ասել, եւ 2018 թուականից է այդպէս եղել», - ընդգծեց Նիկոլ Փաշինեան:

Հայաստանի առջեւ եղած մարտահրաւէրները ներքին չեն, այլ արտաքին են, ամփոփեց Փաշինեան՝ որպէս գլխավոր նպատակներ նշելով կայուն զարգացումն ու Հայաստանի եւ Արցախի անվտանգութիւնը:

«Մենք չունենք ոչ մի ներքին մարտահրաւէր, մեր բոլոր մարտահրաւէրները արտաքին են, եւ այս օրակարգի տրամաբանութեամբ պէտք է ապահովենք Հայաստանի Հանրապետութեան կայուն զարգացումը, Հայաստանի Հանրապետութեան եւ Արցախի Հանրապետութեան անվտանգութիւնը եւ քաղաքացիների երջանկութիւնը: Սա այն մանտաթն է, որ ժողովուրդը տուել է մեզ», - ըստ վարչապետը:

«Խօսել ենք ներքաղաքական ճգնաժամի, բայց ոչ ներքին խնդիրների մասին», - աւելցուց Փաշինեան՝ ըսելով, - «Այն մարդիկ, ովքեր վիճարկում են ներքաղաքական ճգնաժամը յաղթահարուած է, թէ ոչ, նրանք արտաքին ճգնաժամերի յոյս ունեն, որի ֆոնին ինչպէս ճիշդ նկատուեց, փորձել են ներքաղաքական գրոհ կազմակերպել: Այնպիսի գրոհ, ինչպիսին փորձ են արել կազմակերպել Նոյեմբերի 10-ին»:

Ազգային ժողովը 70 կողմ ձայնով ընդունեց կառավարութեան 2021-2026 թուականներու գործունէութեան ծրագիրը:

«Կողմ 70, դէմ 0, ձեռնպահ 0, նախագիծն ընդունուած է», - յայտարարեց խորհրդարանի խօսնակ՝ Ալեն Սիմոնեան:

Քննարկումը տեւեց երեք օր, ան անցաւ փոխադարձ մեղադրանքներու, հայհոյանքներու ու քաջբռնութեամբ մթնոլորտի մէջ:

կուսակցութեան փոխնախագահ՝ Արմէն Աշոտեանը անդրադարձած է: Աշոտեանը հեռավար հարց ուղղած է Սուքիասեանին՝ թէ 90-ականներուն ինչպէ՞ս հարստացած է գործարարը, ո՞րու հետ ունեցած բարեկամական կապի շնորհիւ:

2018-ի լեղափոխութեամբ իշխանութեանէն հեռացած Սարգսեան դեռ ամիսներ առաջ՝ նախընտրա-

կան քարոզարշաւի ընթացքին անդրադարձած էր եւ իր մասին շրջանառուող լուրերին: Ան արձագանքած էր վարչապետ Նիկոլ Փաշինեանի մեղադրանքներուն: Զանոնք կեղծ որակած էր ու պնդած, թէ ընկերները եւ հարիւրաւոր մարդիկ վկայ են, որ ինքը ոչ միայն խաղատուներէ, այլ նաեւ այդ փողոցներէն խուսափած է:

Ձեր Ծանուցումները Վստահեցեք «Մասիս» Շաբաթաթերթին Massis2@earthlink.net (626) 797-7680

ԼՈՒՐԵՐ

ԱԽ Քարտուղար Արմեն Գրիգորեան
Հայաստանի Ինքնիշխան Տարածքը Չի
Կրնար Այլ Ինքնիշխան Երկրի Միջանցք Ըլլալ



Արմեն Գրիգորեան «Ազատութիւն» ռատիոկայանի հաղորդավար
Հրայր Թամրազեանի հետ հարցազրոյցի ժամանակ

«Հայաստանի Հանրապետութեան ինքնիշխան տարածքում չի կարող այլ ինքնիշխան երկրի միջանցք, կամ այլ տրամաբանութիւն լինել»:

Այս մասին «Ազատութիւն»-ի «Կիրակնօրեայ վերլուծական Հրայր Թամրազեանի հետ» հաղորդման ժամանակ ըսաւ Հայաստանի անվտանգութեան խորհուրդի (ԱՆ) քարտուղար՝ Արմեն Գրիգորեան:

Վերջինս ընդգծեց, որ ապաշրջափակումը իմաստ ունի այն տրամաբանութեան մէջ, երբ բոլոր կապուղիները ու ճանապարհները կը բացուին, նշելով, որ Հայաստանը եւս պիտի օգտագործէ Ատրպէյճանի տարածքը՝ Ռուսաստանի հետ կապուելու համար, եւ այստեղ խօսիլ միջանցքի մասին անտրամաբանական կը համարէ ԱՆ-ի քարտուղարը:

Անդրադառնալով Օգոստոս 25-ին մեկնարկած եռամսեայ վարժական հաւաքներուն՝ ԱՆ-ի քարտուղարը ըսաւ, որ պատերազմի վտանգը երբեք չի տարածաշրջանէն չէ անհետացած, սակայն հաւաքները բանակի բարեփոխումներու տրամաբանութեան մաս կը կազմեն՝ երկրի պաշտպանողականութիւնը բարձրացնելու նպատակով:

Պաշտօնական Երեւանի Կոչը Միջազգային
Կառոյցներուն՝ Աշխուժացնել Ծնշունը Պաքուի
Վրայ՝ Հայ Գերիները Ազատելու Համար

Պաշտօնական Երեւանը կոչ կ'ընէ միջազգային կառուցներուն՝ աշխուժացնելու ճնշումը Ատրպէյճանին վրայ, պահանջելով յարգել միջազգային մարդասիրական իրաւունքի նորմերն ու անյապաղ ազատ արձակել ապօրինաբար եւ անմարդկային պայմաններու մէջ Ատրպէյճան պահուող հայ ռազմագերիները եւ քաղաքացիական անձերը:

Բռնի անհետացումներու միջազգային օրուայ կապակցութեամբ իր ուղերձով Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչութեան ղեկավարը շեշտած է, թէ Պաքուն կը հերքէ տասնեակ հայ զինծառայողներու եւ քաղաքացիական անձերու գերեզման փաստը, ինչպէս նաեւ կ'արհամարհէ Ատրպէյճանի մէջ գերեզմանաւորած հայ զինծառայողներու եւ պատանդ առնուած քաղաքացիական անձերու մասին տեղեկատուութիւն տրամադրելու ՄԻԵԴ-ի որոշումները

Եռամսեայ հաւաքի վերաբերեալ «Ազատութիւն»-ի հարցին՝ թէ «ի՞նչ է կատարուում, արդեօ՞ք պատրաստուում էք պատերազմի, արդեօ՞ք հերթական ուխտադրուժ յարձակման վտանգ կայ», Գրիգորեան պատասխանած է.

«Ընդհանուր առմամբ կարող եմ ասել, որ մենք Ատրպէյճանի հետ ուխտ չենք ունեցել, որպէսզի այդ ուխտը ուխտադրուժի, այսպէս ասած: Այն, որ Նոյեմբերի 9-ի յայտարարութիւնը հիմք է հանդիսացել տարածաշրջանի որոշակի կայունացման, բայց չեն կարողացել ամբողջութեամբ լուծել հարցերը, դա ակնյայտ է:

Ինչ վերաբերուում է միջանցքին՝ ուժի միջոցով լուծելուն, ապա Հայաստանի բանակը եւ պաշտպանութեան համակարգը պատրաստ են պաշտպանելու Հայաստանի Հանրապետութեան ինքնիշխան տարածքը: Ընդհանրապէս միջանցքի խօսքը, որը շրջանառութեան մէջ է դրուել, որեւէ առնչութիւն չունի որեւէ փաստաթղթի հետ: Միանշանակ է, որ ոչ Նոյեմբերի 9-ի յայտարարութիւնում, ոչ էլ Յունուարի 11-ի յայտարարութիւնում, միջանցքի մասին որեւէ խօսք չի եղել, եւ այդ քննարկումներն անտեղի են:

եւ կը խոչընդոտէ գերիներու վերադարձը:

«Ի շարունակութիւն Ատրպէյճանի բարձրաստիճան ղեկավարութեան կողմից վարուող հայտեացութեան հետեւողական քաղաքականութեան, Ատրպէյճանում գտնուող հայ գերիներն ու պատանդները ենթարկուում են խոչտանգումների, անմարդկային եւ նուաստացուցիչ վերաբերմունքի: Արդէն արձանագրուած են նաեւ նրանց կեանքի իրաւունքից զրկելու դէպքեր: Շարունակուում են հայ ռազմագերիների ապօրինի եւ շինծու դատավարութիւնները», - ըստ Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչութեան յայտարարած է Միրզոյեան՝ յանցագործութիւն որակելով Ատրպէյճանի կողմէ հայ ռազմագերիներու եւ պատանդ առնուած քաղաքացիներու իրական թիւերու եւ պահման վայրերու թաքցնելը:

Գորիս- Որոտան եւ Շուռնուխ- Կարմրաքար
ճանապարհները Բացուեցան



Գորիս-Կապան միջպետական ճանապարհի Շուռնուխ-Կարմրաքար հատուածը

ՀՀ ազգային անվտանգութեան ծառայութիւնը կը տեղեկացնէ, որ Գորիս-Կապան միջպետական ճանապարհի 25 Օգոստոսէն փակուած Գորիս-Որոտան եւ Շուռնուխ-Կարմրաքար հատուածները վերաբացուած են: Այս մասին կը տեղեկանանք ՀՀ ԱԱԾ հաղորդագրութեանէն:

«Յայտնում ենք, որ Գորիս-Կապան միջպետական ճանապարհը բաց է բոլոր տեսակի փոխադրային միջոցների երթեկութեան եւ քաղաքացիների ազատ տեղաշարժի համար», - նշուած է հաղորդագրութեան մէջ:

Յիշեցնենք, որ Ատրպէյճանի զինուժը երկու օր է, որ փակ կը պահէր Գորիս-Կապան ճանապարհի երկու հատուածները, իսկ իշխանութիւնը յոյսը դեռ չի կորսնցնել, որ իրավիճակը օր առաջ կը կարգաւորուի: Միեւնոյն ժամանակ վարչապետ Նիկոլ Փաշինեան չի բացառել, որ նման միջադէպեր կրնան պատահիլ:

«Քաղաքական առումով ինձ համար միանշանակ է, որ այդ գործողութիւնը արուել է մեր առաջ քաշած խաղաղութեան օրակարգին հարուածելու, այդ օրակարգը վարկաբեկելու համար: Ատրպէյճանի պահուածքը վկայում է, որ նման միջադէպեր էլի կարող են լինել: Մեր ծառայութիւնները պէտք է, ի հարկէ, զգօն լինեն եւ ուշադիր, բայց միւս կողմից մեզ ամուրջից են պէտք, եւ մենք մեր ռազմավարական գիծը, խաղաղութեան օրակարգը պիտի զարգացնենք, առաջ տանենք», - ըսաւ կառավարութեան ղեկավարը:

Ատրպէյճանական կողմի գործողութիւնը, ըստ Նիկոլ Փաշինեանին, կը հակասէ 2020-ի Դեկտեմբերին ձեռքբերուած պայմանաւորուածութեան, որով ճանապարհի 21 քմ. երկարութեամբ հատուածի անվտանգութիւնը նախորդ տարեվերջին ի վեր ուս սահմանապահները

պիտի ապահովեն: Փաշինեան ըսաւ, որ Գորիս-Կապան ճանապարհին ստեղծուած իրավիճակը հայկական կողմի համար կանխատեսելի էր: Վարչապետը ճանապարհի այդ հատուածները ատրպէյճանական անուանումներով կոչեց:

«Մենք այս ընթացքում աշխատել ենք նոր ենթակառուցուածքների ձեւաւորման ուղղութեամբ ու շարունակելու ենք աշխատել, սակայն էյվալյի եւ Չայգամի հատուածներում ճանապարհի վերաբացումը տարածաշրջանային կայունութեան շատ լաւ խորհրդանիշ կարող է դառնալ», - նշեց Փաշինեան:

Շուռնուխէն դէպի Կապան հատուածը ատրպէյճանցիները չորեքշաբթի դիշերուունէ փակ կը պահեն, որու հետեւանքով հայկական ինքնաշարժները շրջափակման մէջ յայտնուեցան, սակայն աւելի ուշ ուսերու միջնորդութեամբ անոնք դուրս ելան: Երէկ առտուունէ ատրպէյճանցիները փակեցին Գորիսէն դէպի Քարահունջ ու Որոտան հատուածը:

Հիմա Գորիս-Կապան ճանապարհի փակ ըլլալուն պատճառով իրանէն եկող բեռնատարները խնդրի առաջ կանգնած են, Կապան-Աղուանի-Տաթև ճանապարհը, որպէս այլընտրանք կ'օգտագործուի, որ դեռ չարմար չէ բեռնափոխադրումներու համար: Վարչապետը աւելի վաղ կառավարութեան նիստին փաստահեցուցած էր, որ ճանապարհի այդ հատուածի հիմնանորոգումը մինչեւ տարեվերջ կ'աւարտի:

«Էդ խնդիրն այս պահին լուծուում է շրջանցող ճանապարհի միջոցով, ի հարկէ, էդ ճանապարհը յարմարեցուած չէ խոշոր բեռնատարների անցման համար, բայց միեւնոյն է այդ ճանապարհը այսօր աշխատում է, եւ այդ ճանապարհով բեռները անցնում են», - ըսաւ Տնտեսութեան նախարար՝ Վահան Քերոբեան:

Ատրպէյճանի ՊՆ-ը Մարտակերտ Բռնուած
Սեփական Ձիւնուորը, Որպէս Հոգեկան Հիւանդ
Ներկայացուցած է

Ատրպէյճանի ՊՆ-ը յայտարարութիւն տարածած է, ուր ներկայացուցած է սեփական զինծառայողը, որպէս հոգեկան խնդիրներ ունեցող: Այս մասին յայտնած է Փաստինֆոն:

Յիշեցնենք, որ Օգոստոս 25-ին ատրպէյճանցի զինծառայող մը մտած է Արցախի Մարտակերտ քաղաքի բնակարաններէն մէկը, ուր գտնուած է երկու անչափահաս երեխայ:

Նոյն օրը վերջինս բերման է ենթարկուած է ԱՀ ազգային անվտանգութեան ծառայութեան կողմէ

եւ յարուցուել է քրէական գործ: Ատրպէյճանի ՊՆ-ը հաստատած է, որ ատրպէյճանցի զինծառայող ծամիլ Պապաեւը հատած եւ անցած է Արցախի սահմանը, այժմ կը գտնուի հայկական կողմը: Վերջիններս նշած են, թէ, իբր, զինծառայող Պապաեւ ինքնակամ լքած է Գանձակի հիւանդանոցի հոգեբուժական բաժանմունքը ու քալելով հասած Մարտակերտ: Այդպիսով՝ փաստացիօրէն ատրպէյճանցիները փորձած են ներկայացնել, թէ իրենց բանակին մէջ հոգեկան հիւանդներ կը ծառայեն:

Հայ Կաթողիկէ Եպիսկոպոսները Հրաւիրուած Են Հռոմ Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց Պատրիարք Ընտրելու Համար



Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ եպիսկոպոսները

Միջին Արեւելքի տարբեր քաղաքներու եւ աշխարհի տարբեր երկիրներու թեմերը ծառայութիւն կատարող Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ եպիսկոպոսները Սեպտեմբեր 20-ին հրաւիրուած են Հռոմ՝ Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ պատրիարք ընտրելու համար, որ կը փոխարինէ Մայիս 25-ին մահանաացուն կնքած Գրիգոր Պետրոս պատրիարքին: «Արմէնփրէս»-ի հաղորդմամբ՝ ինչպէս կը հաղորդէ vaticannews-ը, այս մասին յայտնած է Հայլէպի հայ կաթողիկէներու առաջնորդ եւ Տանն Կիլիկիոյ հայոց պատրիարքութեան թափուր աթոռի կառավարիչ՝ Պետրոս Արքեպիսկոպոս Միրիաթեանը:

Նշուած է, որ Յունիս 22-ին հնարաւոր չէ եղած պատրիարք ընտրել, քանի որ թեկնածուներէն որեւէ մէկը չէ կրցած հաւաքել ձայներու երկու երրորդը, ինչպէս նախատեսուած է Արեւելեան եկեղեցիներու եկեղեցական կանոնադրութեան մէջ: Պետրոս Արքեպիսկոպոս Միրիաթեանը յայտնած է, որ Հայ Կաթողիկէ եպիսկոպոսները պէտք է Սեպտեմբեր 20-ին հաւաքուին Հռոմի Լեւոնեան քահանայապետական վարժարանը, ուր Սեպտեմբեր 22-ին պէտք է սկսին ընտրութեան նիստերը, զորս պիտի նախագահէ Արեւելեան եկեղեցիներու ժողովներու կառավարիչ, կարտինալ՝ Լիոնարտո Սանտրին:

Թուրքիոյ Իշխող Կուսակցութեան Եւ Նախագահի Վարկանիշները Զգալի Անկում Արձանագրած Են

Թուրքիոյ մէջ գործող «Եւրասիական հետազոտութիւններու կեդրոնը», որ հասարակական կարծիքի ուսումնասիրութեամբ կը զբաղի, ենթադրեալ ընտրութիւններու վերաբերեալ հարցաթերթիկ տարածած է, որու արդիւնքները ցոյց տուած, որ իշխող կուսակցութեան, ինչպէս նախագահ Էրտողանի վարկանիշները զգալի անկում արձանագրած են: Այս մասին, ինչպէս հաղորդած է Արմէնփրէս-ը, յայտնած է թրքական demokrat-haber.org-ը: Հարցուողներուն 58%7 տոկոսը գտած է, որ երկրին մէջ պէտք է

կատարուին արտահերթ ընտրութիւններ, իսկ 30.8 տոկոսը դէմ եղած է արտահերթ ընտրութիւններուն: Ըստ հարցման արդիւնքին՝ մասնակիցներու 34%2 տոկոսը կողմ արտայայտուած է, որ ենթադրեալ արտահերթ ընտրութիւններուն երկրի նախագահ ընտրուի գործող նախագահ Ռէճեպ Թայյէպ Էրտողանը, իսկ 54%9 տոկոսը դէմ եղած է Էրտողանին: Հարցուողներուն միայն 29 տոկոսը աջակցութիւն յայտնած է իշխող «Արդարութիւն եւ զարգացում» կուսակցութեան:

Լաւրով Կոչ Կ'ընէ Ատրպէյճանին

Շարունակուած է 1-էն ուած էր դադարեցնել իւրաքանչիւր թշնամական գործողութիւն: Ռուսաստանի նախագահ Ատրպէյճանի ղեկավարութեան եւ նախագահ Ալիեւի հետ շփումներուն, ինչպէս եւ մենք այլ մակարդակներով այդ ազդակը կը յղենք ատրպէյճանցի գործընկերներուն եւ կոչ կ'ընենք ազատ արձակելու անոնց առանց նախապայմաններու, որովհետեւ անիկա կարեւոր մարդասիրական քայլ կ'ըլլայ եւ նշանակալի քայլ վստահութեան ձեւաւորման ուղղութեամբ, որու կարիքը այդքան կայ», - ըսաւ Լաւրով: Ան աւելցուց, որ պիտի շարունակեն հանդէս գալ այդ դիրքերէն, սակայն նկատել տուաւ, որ վերջ-

նական որոշումը, ամէն պարագային, իրենցմէ կախուած չէ: ՀՀ ԱԳ նախարար՝ Արարատ Միրզոյեանը նշեց, որ Հայաստանը վաղուց կատարած է իր պարտաւորութիւնը. «բոլոր բոլորի դիմաց սկզբունքով» Հայաստանը վերադարձուցած է բոլոր ատրպէյճանցի ռազմագերիները: «Մենք համարում ենք, որ Ատրպէյճանը իր կողմից պէտք է վերադարձնի բոլոր ռազմագերիներին եւ այլ պահուող անձանց, ոչ միայն որպէս իր պարտաւորութիւնների կատարում, այլ նախ համար, որպէսզի փոխադարձ վստահութեան մթնոլորտ ստեղծուի: Այդ մթնոլորտում արդէն կարելի կը լինի անցնել հետագայ քննարկումներին եւ բոլոր հարցերի կարգաւորմանը», - ըսաւ Միրզոյեան:

ՄԻԵԴ-ը Հրապարակեց Սասուն Միքայէլեանի Եւ Ալեքսանդր Արզումանեանի Գործով Դատավճիռը



Ալեքսանդր Արզումանեան



Սասուն Միքայէլեան

Մարդու իրաւունքներու եւ ըրոպական դատարանը (ՄԻԵԴ) այսօր՝ 2021-ի Օգոստոս 31-ին, հրապարակած է ԵԿՄ (Երկրապահ կամաւորականների միութիւն) վարչութեան նախագահ՝ Սասուն Միքայէլեանի՝ Հայաստանի Հանրապետութեան դէմ դատական հայցի վերաբերեալ դատավճիռը: Մարդու իրաւունքներու եւ հիմնարար ազատութիւններու պաշտպանութեան մասին համաձայնագրի 34-րդ յօդուածով Հայաստանի Հանրապետութեան դէմ հայցադիմումը (թիւ 1879/10) ընդդէմ Հայաստանի Հանրապետութեան, ՀՀ քաղաքացի Սասուն Միքայէլեանը դատարան ներկայացուցած է 2009-ի Դեկտեմբեր 25-ին: Գործը կը վերաբերի հայցուորին դատապարտման՝ 2008-ի Փետրուար 19-ի վիճելի նախագահական ընտրութիւններուն յաջորդած բողոքի շարժման մասնակցելու համար, որով գործ յարուցուած է համաձայն համաձայնագրի 6-րդ յօդուածի 1-ին եւ 3-րդ կէտերուն, 10-րդ, 11-րդ եւ 14-րդ յօդուածներուն: Մարդու իրաւունքներու եւ ըրոպական դատարանը վճռած է, որ

պատասխանող կողմը երեք ամսուայ ընթացքին որպէս բարոյական վնասի փոխհատուցում պէտք է Սասուն Միքայէլեանին վճարէ 9000 եւրօ, ինչպէս նաեւ 3800 եւրօ՝ անոր կատարած ծախսերուն դիմաց: Մարդու իրաւունքներու եւ ըրոպական դատարանը 2021-ի Օգոստոս 31-ին հրապարակած է ՀՀ նախկին արտաքին գործոց նախարար՝ Ալեքսանդր Արզումանեանի՝ Հայաստանի Հանրապետութեան դէմ դատական հայցի վերաբերեալ դատավճիռը: Եւրոպական դատարանը այսօր Ալեքսանդր Արզումանեանի վերաբերեալ գործով (Մարտ 1-ի գործ) վճռած է ճանաչել Համաձայնագրի 11-րդ յօդուածի խախտում եւ տալ համապատասխան փոխհատուցում: Ալեքսանդր Արզումանեանը Մարդու իրաւունքներու եւ ըրոպական դատարանին ներս շահած է Հայաստանի դէմ ներկայացուցած հայցի գործով դատը, եւ պետական պիւտճէէն ՀՀ կառավարութիւնը Ալեքսանդր Արզումանեանին պէտք է վճարէ 9000 եւրօ որպէս բարոյական վնասի փոխհատուցում, եւս 2600 եւրօ՝ անոր կատարած ծախսերուն դիմաց:

Դրական Ազդակներ Թե՞ Դիւանագիտական

Շարունակուած է 1-էն Երբ ճանչնալ Արցախը Երաւունքաւ, իսկ Հայկական կողմը չի կրնար հրաժարիլ Արցախի ժողովուրդի ինքնորոշման իրաւունքէն: Քաղաքական մեկնաբաններու մօտ տիրող կարծիքը այն է թէ, Անգարան եւ Պաքուն կը գործեն Երրօշմակ եւ ուշ թէ կանուխ Երրօշմակ եւ ուշ թէ կանուխ Երրօշմակ պիտի Երկայացուին Հայկական կողմին: Հոս պէտք է նկատի առնենք հանգամանք մը եւս: Նախագահ Էրտողան յաճախ կը դիմէ դիւանագիտական մամն խաղերու ու խաղաղասիրական խօսքերով հանդէս կու գայ Արեւմուտքին աչքին լաւ երեւնալու նպատակով: Ան իր ռազմաւաւերը կ'ուղարկէ Յունաստանի ծովային սահմաններուն մօտ, տազնապ կը յառաջացնէ եւ ապա ետք քայլ ընելով կը սկսի խօսիլ Յունաստանի հետ լաւ յարաբերութիւններ հաստատելու մասին: Նոյնը ձեւով կը վերաբերի ան իր դրացի միւս երկիրներուն հետ: Միջազգային հանրութեան մօտ աննկատ չմնացին 44-օրեայ

պատերազմի ընթացքին թրքական բանակի անմիջական մասնակցութիւնը ռազմական գործողութիւններուն եւ այս քայլով փորձ կը կատարուի մոռացութեան մատնել տարածաշրջան վարձկան կռուողներ ուղարկելու եւ զինադադարի փորձերը ձախողելու Թուրքիոյ ունեցած դերակատարութիւնը: Վարչապետի խօսքերը Երաւունք կը յառաջացնեն, թե՞ արդեօ՞ք այս օրերուն Երեւանի եւ Անգարայի միջեւ տեղի կ'ունենան ուղղակի կամ անուղղակի գաղտնի բանակցութիւններ, ինչպէս որ պատահած էր Հայ-թրքական հաշտեցման համաձայնագրի ժամանակ, եւ Փաշինեան այդ տեղէն է որ ստացած է «դրական ազդակները»: Այս հարցերուն պատասխանը ստանալու համար պէտք է սպասել նոր զարգացումներու, առանց մեծ յոյսեր կապելու թրքական կողմի ազդակներուն հետ: Միւս կողմէ, չի խանգարեր որ Երեւան շարունակէ դրական մօտեցում ցուցաբերել՝ հասկնալու համար թրքական կողմէ իսկական նպատակները: «ՄԱՍԻՍ»

Տեղի Ունեցաւ ՀԿԲՄ-ի Կրթանպաստի Տարեկան Միջոցառումը

Շարունակուած էջ 1-էն


վարներ, բարերարներ եւ ծնողներ: ՀԿԲՄ-ի անունով ներկաներուն ողջունի խօսքով ելուցի ունեցաւ օրուան հանդիսավարուհի Տիկ. Քաթիա Քրմոյեան-Խոտանեան: Ան բարի գալուստ մաղթելէ ետք, հակիրճ կերպով անդրադարձաւ իր վարչութեան հայրենանուէր օգտաշատ գործունէութեան որ գլխաւորաբար կը միտի գործնապէս քաջալերել ուսումնաստեւնէ հայ երիտասարդները, կրթանպաստի միջոցով, սատար հանդիսանալ անոնց հեռանկարային ծրագիրներու իրականացման:



երեք ուսանողներու յանձնուեցան իրենց կրթանպաստները՝ Քրիսթինա Շիրանեան, Նարեկ Տատուրեան, Ալին Գուգուեան, իսկ չորրորդը՝ Ֆրեզոյէն Մէրի Թօփուլանը:



փուզեան չէր կարողացած անձնապէս ներկայ գտնուիլ հանդիսութեան: Պարգեւները ու վկայագիրները յանձնուեցան ՀԿԲՄ-ի բարերարներէն Տիար Թադէոս Քէօրօղլեանէն ձեռամբ: Այնուհետեւ անոնք հերթով իրենց երախտագիտու-



թիւնն արտայայտեցին նպաստամատոց կազմակերպութեան:

Սոյն միջոցառման զեղարուեստական բաժինին զոյգ մենայարերով իր մասնակցութիւնը բերաւ Նոր Սերունդ Մշակութային Միութեան պարախումբի աստղերէն՝ շնորհալի եւ հեզաճկուն կատարող Մէրի Քիլաճեան, իսկ շնորհալի ասմունքող Քրիսթինա Չիրանեան արտասանեց Գէորգ Էմինէն «Մենք Կէս Ենք» քերթուածը, կիթառի վրայ ընկերակցութեամբ Նարեկ Տատուրեանի:

Մէջ ընդ մէջ յայտարարուեցան սրտաբուխ նուիրատուութիւններ, ՀԿԲՄ-ի կրթանուէր ծրագիրներուն համար, որոնց իրենց մասնակցութիւնը բերին գրեթէ բոլոր ներկաները:

Համադամ ճաշատեսակներու եւ աղանդերներու սպասարկութենէն ետք, գործադրուեցաւ պատշաճ յայտագիր մը: ՀԿԲՄ-ի վարչութեան ժրջան անդամուհիներէն Դոկտ. Ռոզին Տէր Դաւիթեան մասնագիտական համապարփակ գեկուցումով մը հանդէս գալով, համաշխարհային մակարդակով բնութագրեց կրթաթոշակներու եւ կրթանպաստներու ներգործութիւնը երիտասարդութեան ապագայի վրայ: Դար մը առաջ ստեղծուած այս համակարգն իր դրական անկիւնադարձային ազդեցութիւնն ունեցած է, տեսլապաշտ ուսանողի ապագայ կեանքին մէջ: Այդպիսիներէն մին եղած է նաեւ օրուան գեկուցաբերը...:

Ռուսաստանը 1868-ին Անդրկովկասը հերթական անգամ ենթարկեց վարչական բաժանման: Շամախիի նահանգը կիսուեց Ելիզավետպոլի եւ Պաքուի նահանգների: Այսպիսով՝ Անդրկովկասում գոյութիւն ունէին վեց նահանգներ՝ Քուսթայիսի, Թիֆլիսի, Դաղստանի, Պաքուի, Ելիզավետպոլի եւ Երեւանի: 1870-ական թթ. սկզբներին Երեւանի նահանգում բնակչութեան թիւը արդէն անցնում էր կէս միլիոնից, որից 55 տոկոսը կազմում էին հայերը: Հայերը հսկայական թիւ էին կազմում Թիֆլիսի եւ Ելիզավետպոլի նահանգներում:

Ռուս-թուրքական 1877-78 թթ. պատերազմից յետոյ, երբ ռուսները գրաւեցին Կարսն ու Պաթումը, Անդրկովկասը բաժանուեց նոր վարչական բաժանման եւ այդ բաժանումը պահպանուեց մինչեւ 1917-

Ազգային, Ապագային Կամ Գերագային

ԲԱԳՐԱՏ ԷՍԴՈՒԳԵԱՆ

1789ի Ֆրանսական մեծ յեղափոխութեանէ ետք արար աշխարհ մէկ կողմ չարեց յեղափոխութեան հիմնը դարձած կարգախօսը եւ սկսաւ փառաբանել ազգային կոչումը իբրեւ թէ սրբութիւնը: Մինչդեռ յեղափոխութեան ոգին կ'արտացոլուէր «Ազատութիւն, հաւասարութիւն եւ արդարութիւն» կարգախօսով: Յեղափոխութիւնը վերջ տուաւ աւատապետական փառքերով եւ տարանջատուած մենատիրութիւններու: Անոնց տեղ կազմուեցան ազգային պետութիւններ եւ նոյնիսկ շատ անգամ հանրապետութիւններ: Ապա այդ ընթացքին մէջ է որ աճեցաւ մարդկային մտքի ամենաթունաւոր գաղափարներէն մէկը՝ ազգայնականութիւնը: Առանց շատ ուշանալու ան ունեցաւ նաեւ իր թագ ու պսակը, որ կը կոչուէր ցեղապաշտութիւն կամ աւելի տարածուն համաշխարհային տերմինով ռասիզմ: Շատեր միամիտօրէն կը կարծեն թէ ազգային կամ ազգայնական կոչումները կու գան բացատրելու իր ազգը սիրելու երեւոյթը: Սա մեր ժամանակներու մեծագոյն սուտն է, որովհետեւ ազգայինը կը սնանի ուրիշ ազգերու հանդէպ նախատինք եւ ատելութիւնով: Ազգայինը կը ձգտի ինք ու իր պատկանած ազգը վեր դասելու տիմար մարմաջին: Այդ մարմաջով հետզհետէ կ'աճեցնէ թշնամութիւն եւ նողկանք ուրիշներու հանդէպ: Ի վերջոյ ընդունելու ենք թէ ազգասիրութիւն կոչուածը պարտաւոր է մարդասէր ըլլալու: Այս հաստատումները յարատեւ օրակարգ մը կը կազմեն մեր դիմաց: Իսկ երբեմն դէպքերու զարգացումը անոր կը շնորհէ գերազանց այժմէականութիւն: Աֆղանստանի մէջ պատահածները ոչ թէ աֆղան ժողովուրդի յետամնա-

ցութեան, այլ այդ երկիրը յետամնացութեան դատապարտելէ յոյսեր ակնկալողներու չար արարքն է:

Ափսոսանքով կը նկատենք թէ կան մարդիկ որոնք զարմանքի կը մատնուին հայ թերթի մը էջերուն վրայ Աֆղանստանի զարգացումներուն այսքան լայն արծարծուելուն: Իրենց միամտութեան ամենահետաքրքրական դրսեւորումը կը յայտնուի «Մեզի հետ ի՞նչ կապ ունի որ» զարմանքի շեշտադրութիւնով:

Վա՛յ ինձ, վա՛յ ինձ, վա՛յ ինձ: Որո՞ւ եւ ի՞նչ եղանակով պատմեմ թէ երկրագունդը բոլորիս տունն է եւ այդ տան որեւէ մէկ անկիւնի փորձանքը իր բնական հետեւանքները կ'ունենայ մեր առօրեային վրայ ալ: Մանաւանդ որ սեփական երկրի իբրեւ թէ անվտանգութիւնը ապահովողները ուղղակիօրէն մեղաւորներն են այլ երկիրներու մէջ գործուած չարիքներուն:

Հասկնալի է, մարդիկ չեն ուզեր իրենցմէ այդքան հեռու կատարուած չարիքներու մեղքը ստանձնել: Բայց իրողութիւնը կը մնայ անփոփոխ: Աֆղանստանի այսօրը 20 տարի առաջ ծրագրուեցաւ ԱՄՆի պաշտպանութեան նախարարութեան հնգանկիւն շէնքի նկուղային նրբանցքներուն մէջ: Ուրեմն իւրաքանչիւրս ունինք մեր պախախտատուութեան բաժինը: Այլ խօսքով բոլորս ձեւով մը պարտական ենք անելի մատնուած աֆղան կանանց հանդէպ:

Պահը անգամ մը եւս զօրակցութիւն կը թելադրէ: Զօրակցութիւն յանուն խղճի ազատութեան: Զօրակցութիւն յանուն «Մարդ» կոչումի արդարացման: Հազիւ գերազային սկզբունքներով կարելի պիտի ըլլայ ոչ միայն ազգային, այլ համամարդկային արժանիքներու վերահաստատումը:

«ԱԿՕՍ»

18 թթ., երբ կործանուեց Ռոմանովների 300-ամեայ կայսրութիւնը, իսկ Անդրկովկասը անկախացաւ:

1878-1918 թթ. Անդրկովկասում գոյութիւն ունէին հետեւեալ վարչական միաւորները՝ նահանգները՝ Քուսթայիսի, Պաթումի, Կարսի, Երեւանի, Թիֆլիսի, Ելիզավետպոլի, Պաքուի, Դաղստանի եւ մէկ շրջան՝ Զաքաթալայի:

1918-ի Մայիսին Հայաստանի Հանրապետութիւնը հռչակուեց շուրջ 10 հազար քառակուսի քիլոմետր տարածքի վրայ: 1920-1921 թուականներին այն խորհրդայնացուեց ռուս բոլշեւիկների ու թուրք քեմալականների հարուած-

ների ու սպառնալիքների տակ, իսկ 1922-ին կցուեց Խորհրդային Միութեանը նախ որպէս Անդրկովկասեան Դաշնութեան մաս, ապա եւ որպէս համամիութենական հանրապետութիւն 1936-ից:

Այսօր՝ 2018-ին, Հայաստանի Հանրապետութիւնը տարածուած է գրեթէ 30 հազար քառակուսի քիլոմետրի, իսկ միջազգայնորէն չճանաչուած, իրականում եւ փաստացի Հայաստանի մաս կազմող Արցախը՝ շուրջ 12 հազար քառակուսի քիլոմետրի վրայ:

Դայկական Ուսումնասիրութիւնների Անի Կենտրոն

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ
Name:
Address:
City: State: Zip Code:
Country:
Tel :
Email:

Կերպ

ՆՈՐԱՅՐ ՏԱՏՈՒՐԵԱՆ

Պատերազմ, ընտրություններ, համաճարակ, սահմանազժողով, սահմանազատում, նոր սահմանադրություն... Ինչ կերպ ստացաւ Հայաստանը: Կերպարանափոխուեցաւ անոր դիմագիծը եւ ապրելակերպը: (Կարելի է ապրիլ սփիւռքի մէջ ու դեռ նկատել այդ բոլորը:) Յարգելի ընթերցող «կերպ» բառի համառոտ ուսումնասիրութիւն մը պիտի բաւէ, որ մենք բոլորը ըմբռնենք: Ուստի, այսօր ձեզ կը հրահարեմ ականջ տալ «կերպ» բառի լաւ կազմակերպուած պատմութեան ու հաղորդակից ըլլալ հայ ազգի ընդունած բազմաթիւ կերպարանքներուն հին ու նոր: Զեզ կը վստահեցնեմ, «կերպ»ը չէ՛ միապաղաղ, միօրինակ, կամ՝ միակերպ: Այդ միավանկը ունի հարուստ անցեալ՝ անակնկալներով և:

Պահլաւերէն ծագում ունի «կերպ» բառը: Բունը՝ керп, որ կը նշանակէ «մարմին, ձեւ»: Ունի լատիներէն նոյնիմաստ գարմիկ՝ corpus: Մեր հիներու համար ան նաեւ արտաքին տեսք էր, տարագ, որակ եւ որպիսութիւն, անձնաւորութիւն, դէմք եւ երես: Սուրբ Գրքի թարգմանիչները, Ագաթանգոզը, Փարպեցիին, Շիրակացիին եւ այլ մատենագիրներ բառիս տուին այլ եւ այլ կերպեր, բոլորը խիստ պատկերալից եւ հայտն երեւակալութեան փայլատակումներ, ինչպէս՝ լուսակերպ, իգակերպ, գիշերակերպ, կայսերակերպ, սքանչելակերպ, բիւրակերպ եւ ձիւնակերպիկ: Հայ պատմագիրներու երկերու մէջ նկարագրուած են նաեւ մեր Լեւոնաշխարհը ոտնակոխած «Մարդակերպ անասուններ» եւ «Անասնակերպ մարդիկ»:

Ոսկեդարուն բառը ստացաւ դարձուածքի երեւոյթ, ինչպէս՝ «կերպս ի կերպս զանազան ձեւերով, ի կերպս կերպս առնել» նոր ձեւ ստանալ:

«Կերպ» բառով հայր իր միտքերը արտայայտեց լայնօրէն: Անոր հետ շինուած բառերու թիւը կը հասնի 250ի: Պատկառելի թիւ մը պարզ միավանկի մը համար: Այդ բառերով, կասկած չկայ, թէ կարելի է առձեռն բառարան մը պատրաստել: Սակայն, չեմ ուզեր ձեր ժամանակը շահագործել: Ուստի, յիշեմ այն բառերը, որոնք գրական գործածութիւններ ունեցան: Որպէսզի յօդուածս մնայ կազմակերպուած, նախ յիշեմ անասուններու անուններով շինուած խոսքերը. աղանակերպ, թռչնակերպ, օձակերպ, աղուեսակերպ, արջակերպ, առիծակերպ եւ արծուակերպ: Դուք չկարծէք, թէ սնամէջ են այս ածականները եւ անպարունակ: Աղաւնակերպը Սուրբ Հոգին է: Ներսէս Շնորհալին իր բանաստեղծութիւններու մէջ յաճախ գործածեց գայն. «Հոգին աղանակերպ իջեալ», «Լուսափայլ Հոգին գայր աղանակերպ յերկնից»: Շնորհալիին 500 տարի անց, տաղասաց Դաւիթ Սալաձորցիին ալ յօրինեց նոյն պատկերը. «Հազար երնէկ Հայոց ազգին, / Իջաւ աղանակերպ Հոգին»: Երեւանեան ոսկերչատուն մը «թռչնակերպ» գիրերով շինուած մանեակներ կը վաճառէ, «օձակերպ» ածականը 10րդ դարէն ի վեր գործածելի է «Գաւազանն Մովսէսի օձակերպ եղև», «Օձակերպ բերանովն համբուրեաց գնայ», Արտաշատի, Արմաւիրի եւ Եղեգնաձորի մէջ յայտնաբերուած են «արջակերպ»

կաւէ ամաններ, թոնտրակեան շարժումին հետեւողներու ուսերուն վրայ կը խարանէին «աղուեսակերպ» դրոշմ, Հայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «արիւծակերպ» կոչեց Արշակունի Տրդատ Թագաւորին, ու խօսեցաւ «գայակերպ» ազգերումասին: Ունեցանք նաեւ խիստ հագուակերպ ածականներ ու շինեցինք ընտիր գրական պատկերներ: Ահա քանի մը օրինակ. «Հուր խաւարակերպ», Ներսէս Շնորհալի, «Հրակերպ հրեշտակ», Ներսէս Շնորհալի, «Սպառնականամակներ, արիւնակերպ կարմիր կնիքով զարդարուած», Մաղաքիա Օրմանեան, «Սուներիս կայծակնակերպ հասակը», Սիւսանյա, «Մարդակերպ կապիկ», Պարոյր Սեւակ: Կը տեսնէ՞ք, «կերպ» բառը ճկուն է, յանկարծ կրնայ դառնալ բանաստեղծական, զաւեշտական, կամ՝ կրօնական: Վերջինը տեսանելի է «բառակերպ» ածականի մէջ: Ան մարդու, առիւծի, ցուլի եւ արծիւի կերպարներով շինուած արարած է, ըստ Յովհաննէս Աւետարանինչի՝ Արարչի Գահի չորս անկիւններու եւ դրախտի չորս սահմաններու պահպանները:

Յարգելի ընթերցող, քիչ մը երեւակալութիւն գործածելով դուք ալ կրնաք հնացած բառերուն նոր կեանք տալ: Հաճեցէք ձեր ապագայ գրուցներուն յիշել «աստղակերպ, արեգակնակերպ, շքեղակերպ, չքնաղակերպ եւ բարեկերպ» բառերը:

«Կերպ» բառը իր ամենապայծառ ձեւերը ընդունեցաւ 10րդ դարուն, երբ Գրիգոր Նարեկացին «Մատենան Ողբերգութեան» աշխատասիրութեան մէջ նկարագրեց մարդու բազմաթիւ երբեմն ամօթալի կերպերը, ինչպէս՝ «Կերպ անպատկառ», «Հողանիւթ կերպ», «Կերպարան միշտ սխալական», «Սուտ կերպարանք կեղծաւորին», «Պոռնիկակերտ կերպարան»:

«Կերպ» բառը պերճութիւն տուաւ նաեւ հայկական տպագիր գիրքերու աշխարհին: Այդ բառով լոյս տեսած առաջին գիրքն էր Յովակիմ Օղուլլուխեանի 1806ին Վենետիկի մէջ լոյս տեսած մէկ աշխատասիրութիւնը. «Նիւթ բժշկական... թէ իբրեւ կերակուր, թէ իբրեւ դեղ, եւ նոցա գործածելուն կերպը...»: Այնուհետեւ լոյս տեսան հետաքրքրական այլ գիրքեր. «Օրը աստուածապաշտութեամբ անցընելու կերպը», «Հիւանդութեանց առջեւ առնելու կերպ», «Խավար խանի պորտալին վիճակը եւ հոն շատ ստակ շահելու դիւրին կերպը», «Կեանքի կերպարանափոխութիւնները», «Ցուցակ Հայաստանի կերպարուեստագիտների ընկերութեան չորրորդ պատկերահանդիսի»:

Իսկ այժմ եթէ դուք կը քալէք Երեւանի փողոցներու վրայ, կամ կը կարդաք հայրենի մամուլը, կը զգաք, թէ կեանքը հայրենիքի մէջ ինչպէս կերպարանափոխուեր է մէկ տարուայ մէջ: Կարգանք քանի մը խորագիր. «Կեանքին սկսել եմ այլ կերպ նայել. Ոտքը կորցրած Հրաչեան», «Մերոնք աղբերջանցի գիւնուորականների ձեռքից մի կերպ կարողացել են փրկել հովիւ պապիկին», «Ամէն կերպ կ'աջակցենք գերիների փոխանակման գործընթացի շտապօգնութեանը», «Պիտի պարտքս տայի, այլ կերպ չէի կարող. ՌԴ-ում ծառայած

«Մեկնութիւն Ժամակարգութեան» Աճեւացեաց Խոսրով Եպիսկոպոսի (902-964) Մեծ Զօրս Կտակը

ՏՕՔԹ. ԶԱՒԵՆ Ա. ՔՅՆՅ.
ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ


Էվրեկէն Գահիրէ
Երբ մեծ հայր Յակոբ Արզումանեան, էվէրէկի քաղաքապետութեան մնայուն պաշտօնեայ, 1925 թուականին Երուսաղէմ իր ուխտի այցելութենէն ետք Գահիրէ իր գաւակներուն մօտ կը հասնէր, հետը բերած էր իր հնատիպ գիրքերէն մի քանին որոնցմէ մին հօրս վկայութեամբ «Մեկնութիւն Ժամակարգութեան» գիրքն էր զոր ձեռքերովս կաշեկազմ ամրացուցեր էի տարիներ առաջ: Մեծ Հայրս զոչք մը ձեռագիր մատեններ Աւետարան մը եւ Գանձարան մը որպէս իր ուխտի նուէրը յանձնէր էր Եղիշէ Դուրեան Պատրիարքին որմէ օրհնութեան գիր մը ստացեր էր որ այժմ իմ մօտ կը մնայ:

Յատորոգ
Խոսրով Եպիսկոպոս Անձեւացի ապրեցաւ 10-րդ դարուն նախ որպէս աշխարհական, ամուսնացած երեք որդիներով, եւ ապա կնոջ մահէն ետք կրօնաւոր դարձած եւ եպիսկոպոսացած Անանիայ Ա Մոկացի Կաթողիկոսէն որպէս Վասպուրական նահանգի Անձեւացեաց Եպիսկոպոս: Յովհաննէս, Սահակ եւ Գրիգոր որդիներէն ամենէն յայտնին եղաւ մեծագոյն աղօթասացն ու վատիկանէն հռչակուած Տիեզերական Վարդապետը Սուրբ Գրիգոր Նարեկացիին՝ յայտնի իր «Մատենան Ողբերգութեան» նշանաւոր աղօթագիրքով:

Խոսրով Եպիսկոպոս երկու մեկնութիւններ գրած է 950-ական թուականներուն՝ Հայ Եկեղեցոյ Պատարագի Մեկնութիւնը եւ Ներկայ հատորս՝ Մեկնութիւն Ժամակարգութեան, վերլուծելով ամենայն տեսիլ մանրամասնութեամբ մեր ներկայ Ժամագիրքի ժամերգութիւնները տող առ տող անշուշտ բոլորն ալ գրաբար լեզուով: Սոյն հնատիպ հրատարակութիւնը աշխարհով մէկ բացառիկ կը մնայ այն հանգամանքով որ եթէ նոյնիսկ Երեւանի Մատենադարանին մէջ ի պահ կը գտնուի օրինակ մը, եւ ուրիշ մըն ալ թերեւս Երուսաղէմի Պատրիարքութեան Կիւլպէնկեան Մատենադարանին մէջ, մեր այս օրինակը ինքնին կը մնայ բացառիկ:

Սոյն Մեկնութիւնը տպուած է «Հրամանաւ ամենապատիւ եւ վեհափառ պատրիարքին Կ. Պոլսոյ Տեսառն Յակոբեանի աստուածաբան արքեպիսկոպոսի» 1840 թուին Կ Պոլիս: Ծանիկ Մահտեսի Սիմոնեան կարեւոր յառաջաբան մը գրած է գրաբար որմէ կը հասկնանք թէ գիրքը տպագրուած է «Ի յոյժ հնագոյն օրինակէ ինչ, եւ բազում տեղիքն ի մթութենէ ի լոյս ածեալ պայծառացան»: Մեծագոյն արժէքը սոյն հրատարակութեան հնագոյն ձեռագիր «Ժամագիրք»է մը տպուած ըլլալն է, մեզի շատ անծանօթ մանրամասնութիւններով, որով ընթերցողը թէ՛ ժամապաշտութեանց հնագոյն բնագիրն ու թէ՛ անոնց մեկնութիւնը միանգամայն կը տեսնէ: Կը սկսի Գիշերային ժամերգութեամբ ու կ'աւարտի հսկումի խաղաղական եւ Հանգստեան ժամերգութիւններով:

Խոսրով Անձեւացիի «Յառաջաբանութիւն»ը կը սկսի յատկանշական սա խօսքերով «Ընդ Աստու-



ծոյ եւ վասն Աստուծոյ խօսելով՝ ամենայն արթնութեամբ եւ զգուշութեամբ»: (Աստուծոյ հետ եւ Աստուծոյ մասին խօսելով՝ մտքի արթնութեամբ եւ զգուշութեամբ): Հետեւելով իր առաջադրած հոգեկան ու մտաւոր պատրաստութեան եւ պայմաններուն, հեղինակը կը մէջբերէ գլխաւոր քարոզիչ առաջին տողերը եւ կը մեկնաբանէ զանոնք միշտ նկատի ունենալով «ընդ Աստուծոյ եւ վասն Աստուծոյ» յարակցութիւնը: Մեզի շատ ծանօթ Հեռեւեալ օրինակը կը մէջբերեմ սարկաւազին քարոզէն՝

Չարթուցեալքս ամենեքեան ի հանգստեմքս քնոյ զոր շնորհեաց մեզ մարդասերն

Աստուած ի միսիարուքիւն եւ ի սփոփանս տկարութեան մերուն:

Այստեղ Խոսրով Անձեւացի Աստուծոյ շնորհքն ու մարդոց սփոփանքը յարակից կը դարձնէ տալով այն բարի պատգամը թէ Աստուած ողորմութեամբ մեզ ընտրեց, մինչ մենք որպէս խտտանք հեռացած էինք Աստուծոյ տալիք ողորմութենէն: Իր ողորմութեամբ մեզ ընտրեց, իմանալով արարածներու սկարութիւնը: Այլ օրինակ մը մեզի շատ ծանօթ օրհներգէն՝

«Փառքի բարձունս Աստուծոյ»:

Այստեղ Եպիսկոպոսը բարձունքն ու երկիրը դիմաւորելով պարտաւոր կը դարձնէ հաւատացեալը երբեմն բաժնուելու իր ոտներուն տակ եղող հողէն բարձրանալու, եւ այդ ալ օրհներգութեամբ եւ սաղմոսիւք, քանի որ այդ հոգեւոր երգին երկու բաժինները, մասնաւոր երկրորդ մասը՝ «Եւ յամենայն ժամ» ողորմած են սաղմոսներով: Կ'ըսէ հեղինակը «Երբ Փառք ի բարձունս Աստուծոյ» կ'ըսենք, չմտածենք պարզօրէն երկրի եւ երկնքի միջեւ գոյութիւն ունեցող անջրպետի մասին, այլ գիտակցինք թէ որքան հեռու ըլլայ երկինքը մեզմէ այնքան կը մօտենանք անոր երբ արժանի դառնանք օրհնաբանելով զԱստուած:

Աստուծոյ բարձունքներու մասին է խօսքը, կ'ըսէ, որ սուտանուն աստուածներն ու ճշմարիտ Աստուածը անջրպետներով կը բաժնեն իրարմէ, միակ այն ուժով զոր կը ճանչնանք որպէս «փառք ու պատիւ» առաքել միակ Աստուծոյ: Այդ հոգեւոր երգին մէջ Ողբին եւ Սուրբ Հոգին Աստուած կը միջնորդեն, «Զի Տէրն բարձանց ի հայրական ծոցոյ խոնարհեցաւ եւ էջ ի մեր բնութիւնս միանալով»:

Ուրբաթ Օրեայ Հանդիպումներ Լ.Ի. Միութիւնում



Ռ. ԿՈՐԻԻՆ

Աւանդական սովորույթ է դարձել շաբաթուաչ մէջ մի օր Լոսան-Չեյնսի Իրանահայ Միութեան կենտրոնատեղիում միութենականներից մի խումբ շուրջ բոլոր հաւաքուեն եւզրուցեն կեանքն ընթացող յուզող խնդիրներին, հայկական իրադարձութիւնների եւ մարտահրաւէրների շուրջ կարծիքներ, մտքեր եւ տեսակէտներ հնչեցնելու ու տեղեկութիւններ փոխանցելու համար:

Այդ հաւաքները սկսուել են, երբ միութիւնը գտնուում էր Brand պողոտայի վրայ (միութեան շէնքի հողատարածքը դարձաւ մէկ մասնիկը Americana բազմաբովանդակ համալիրի), յետոյ ժամանակաւորապէս Wilson պողոտայում քաղաքապետարանի կողմից յատկացուած շէնքում: Այն տարիներին հաւաքները բազմամարդ ներկայութիւն էր, նաեւ ոչ միութենականների բուռն մասնակցութիւն՝ երիտասարդ ու տարեց, երբ ողորմամբ հոգիները՝ պրոֆեսոր Ազատ Վեհունին եւ պատմաբան Հովիկ Ներսիսեանը ողջ էին եւղեկավարի դիրքում ունեղիրներին գրաւում էին իրենց գիտական եւ պատմական տեղեկութիւններով, նոյնիսկ նոր հրատարակուած գրքերի ներկայացում էր լինում: Նուաստիս առաջին եւերկրորդ գրքերի ներկայացումը կատարուել է այդ հաւաքներում, որոնց մասին Ազատ Վեհունու, Հովիկ Ներսիսեանի, Ներսէսի, Ջանիբեկ Կոչեցու եւ այլոց տպաւորութիւնները եւ խօսքերը արտացոլուել են իմ՝ «Գիրքը լուսոյ աղբիւր» երկարաշունչ յօդուածում: Այդ երկու երախտաւոր անձերը չտեսան միութեան նոր կենտրոնատեղիի զետեղից յառնուած հոյակապ եւ յարկանի կառուցողները՝ իրանահայութեան մշակույթի եւ միութենական կեանքի կենտրոնը: Նրանց մահից յետոյ էլ շարունակուեցին այդ հանդիպումները, սակայն պակասաբար (Corona virus) վարակի տարածումը ամեն տեսակ հաւաք ու համախմբում արգելեց, կեանքը դժգոհացաւ, դարձաւ մռայլ, մահուան վախ, սարսափ, միջազգայնօրէն բազմաթիւ կորուստներ, մեր փոքրիկ Հայաստանում շուրջ հինգ հազար կորուստ, որը մեծ թիւ է քիչ բնակչութեամբ երկրում, այսպէս այդ վարակը աղէտ դարձաւ երկրների եւ ժողովուրդների կեանքում պարտադրելով անտեսական եւ յարաբերութիւնների սահմանափակումներ ու մեկուսացումներ, մարդը մարդից խուսափում էր այդ վարակի պատճառով:

Հանդիպման ներկայ միութենականներ եւ հիւրեր Պատուաստումները որոշակի վերացրեցին արգելքները, սակայն

տակաւին զգոնութիւնը եւ պաշտպանութիւնը կարիք է դնել տարի է որ միութեան վարչութեան թոյլատուութեամբ շարունակուել են այդ հանդիպումները ուրբաթ օրերը նաեւ օտեան մի երկու-երեք ժամ տեւողութեամբ ոչ գովելի թուաքանակով, ոչ երիտասարդ ուժի ներկայութեամբ: Վարչութիւնը պարտականութիւն ունի քաջալերանք լինի աշխուժացնելու հանդիպումները:

Այս ուրբաթ Օգոստոս 6-ի հանդիպումը բացառիկ ոգեւորութեան մթնոլորտ դարձաւ, բայց պիտի յիշեմ մի քանի հոգիների բացակայութիւնը, ինչպէս՝ Վարոսի, Ներսէսի, Արշամի եւ Լուրիշեւրի, որոնց ներկայութիւնը առաւել հետաքրքրական եւ ուսանելի կը դարձնէր: Այս անգամ հիւրաբար ներկայ էին գտնուել Մասիս եւ Անուշավան Դիւանչեանները, Սաքօ Եղնազարը ներկայացել էր որպէս միութենական:



Ջաւեն Գրիգորեանը ասումընթելիս եւ թարգմանիչ Սաքօ Եղնազար

Մեր ծրագիրը սկսուեց միութենական Ջաւեն Գրիգորեանի ասմունքով: Նախքան ասմունքը կենսագրական հակիրճ տեղեկութիւն տրուեց նրա մասին: Նա իրանի համալսարանի քիմեական բուհն աւարտելով ուսուցչութիւն է արել Թեհրանի «Սողոմոնեան» հայկական միջնակարգ դպրոցում, ապա ԱՄՆ տեղափոխուելով շինարարական սեփական գործն է ստեղծել եւ շրջապատի միութեան հասել: Ջաւենը գործին աւելցրեց զբաղուել է գրականութեամբ՝ ընթերցելով հայնշանաւոր հեղինակների գրքեր: Նա շատ սահուն եւ պարզաբան արտասանեց Պարոյր Սեւակից երկու երկարաշունչ բանաստեղծութիւններ՝ «Մայրենի լեզու» եւ «Բարեւ», այդու ներկաների կողմից գնահատանքի արժանացաւ: Նկատելով այդ հոյակապ բանաստեղծութիւնները իրենց մէջ պարունակուել են խոր մտքեր եւ փառաբանութիւններ Սրբ. Մեսրոպ Մաշտոցի նկատմամբ, իւրաքանչիւրից յիշենք մէկ պարբերութիւն առ ի

յիշողութեան թարմացում:
«Մայրենի լեզու»-ից
«Դու մեր մեծ երթի գաւազանակիր,
Եւ մեր պատմութեան մեծագոյն դիւան,
Մեր ազնուութեան գովասանագիր,
Մեր մտքի պահեստ, հոգու օթեւան:
Անցեալին պարզուած դու մեր լսափող,
Եւ մեր խօսափող՝ գալիքին ուղուած,
Դու մեր սրբութիւն՝ կնքուած Մեսրոպով,
Նարեկացիով օծուած եւ իւրուած»:

«Բարեւ»-ից
Նա էլ մի գուցէ հեճն ցոյն վայրկեանին
Խաղալիք դառնար մեր մանկան համար
Եւ մի այնպիսի՝ կարգին խաղալիք,
Որ ո՛չ լարոււմ է, ո՛չ էլ հասարակ բանից փչանում:
Այսպէս էլ՝ օձը ծերերի ձեռքին ձեռնափայտ դառնար,
Կոկորդիլոսը դառնար պահարան խաղալիքների,
Կախարան դառնար եղջերուն վայրի:
Եւ փոթորիկը՝ բեմի պարախումբ,
Մարդն էլ՝ Մարդի իրօք...

Սաքօ Եղնազարը մեր համայնքում ծանօթ դէմք է իր կատարած արժէքաւոր հայրենից պարսկերէն թարգմանութիւններով ի մասնաւորի Ջարենցից եւ Խաչատրեանի՝ «Մեռած քաղաքի պարիսպների տակ» թարգմանութիւնը: Նա Գրիգոր Նարեկացին է թարգմանում եւ կարգաց մի հատուած, կը յուսանք գիրքը աւարտին հասցնի եւ կատարուի շնորհանդէս-ներկայացումը:
Մասիս Դիւանչեանը ներկայացրեց իր գիրքը՝ «Կեանքի շառաւիղներում» անունով, գրքում գրութիւններին աւելցրեց ընդգրկուած է նրա հորալի փայտի վրայ քանդակագործութիւնները շուրջ յիսուն գունաւոր մեծադիր պատկերներով, բոլոր գործերն էլ շատ գեղեցիկ եւ հիանալի նորութիւններ թանգարանի արժանի գործեր են, նա շնորհանդէսով ներկայացնելու է իր գործերը, ներկաները

մեծապէս գնահատեցին նրա շնորհքն ու տաղանդը:
Ներկաների պահանջով Գրիգոր Գրիգորեանին առաջարկուեց իր բանաստեղծութիւններից՝ «Ոսկանի հարկը» արտասանի: Նա Ջաւենի հայրն է եւ գտնուում է պատկառելի տարիքում, այս տարիքում փայլուն յիշողութիւն ունի, Աւետիք Իսահակեանի՝ «Աբուլալ մահարի» պոէմը գոց եւ սահուն ասմունքում է, նա ունեղիրներին զարմանք է արթնում իր յիշողութեամբ: Գրիգորը անսխալ եւ սահուն արտասանեց այդ գաւառական կեանքին առնչող երկար բանաստեղծութիւնը բուռն ծափերի արժանանալով: Ներկայացուած է երկու քառեակ նրանից՝
Հայ գաւառներից է Բուրվարին,
Յայտնի է նրա բերք ու բարին,
Զիւնով ծածկուած էր սարերը,
Բերքով լցուած էր արտերը:

Ամէն ազգ իրեն դիմը (կրօն)
Ծիշտ է ասում էս հայ կինը,
Թէ լինի ես խելացի,
Գիւղը չէի տայ նրան վարձի:

Հայրենիքի վերջին իրադարձութիւնները մտքերի փոխանակման նիւթ դարձան: Սեմիկն ու Շաւարշը տեղեկացրեցին թէ՛ Հայաստանի բանակի հրամանատարութիւնը պատուիրել է՝ որեւէ ատրեջանական սաղրանք եւ տոնածաղիկ մեր սահմանների նկատմամբ հակադարձուելու է: Ազգային ժողովում որոշ պատգամաւորների ոչ կառուցողական կեցուածքը քննադատուեց: Նրանք պիտի գիտակցեն, որ ընտրուել են հայրենիքի ապահովութեան եւ հզօրացման ու ժողովրդի բարեկեանքի համար որոշում եւ աշխատանք տանեն: Աշխարհաքաղաքական տիրող պայմանները իւրաքանչիւր հային թելադրում են զգոն պաշտպանել միասնականութիւնը եւ խառնել նպատակադրել երկիրը այս ճգնաժամից դուրս բերել, սոցիալական կեանքը կարգաւորել, Արցախի կարգավիճակը օրակարգի մէջ պահել ու իրականացնել Արցախի գրաւած տարածքների ետ բերումը: Սփիւռք-Հայաստան բոլոր հայերի առաքելութիւնը պիտի լինի հայրենիքի հզօրացման սատար կանգնել նիւթով, բանիւ եւ նուիրուածութեամբ:
Այսպէս հանդիպումը արդիւնաւէտ օրակարգով աւարտին հասաւ:

#VACCINATEPASADENA

MODERNA, PFIZER AND JOHNSON & JOHNSON VACCINE CLINIC

Thursday, September 9, 4 - 5:30 p.m.
Saint Gregory Armenian Apostolic Church
2215 E. Colorado Blvd.

OPEN TO EVERYONE AGE 12 AND UP
PRE-REGISTER AT MYTURN.CA.GOV
OR REGISTER ON SITE

- DO NOT ATTEND IF YOU ARE SICK OR HAVE COVID-19 -
- WEAR A MASK -
- MINORS MUST BE ACCOMPANIED BY PARENT/LEGAL GUARDIAN -

COVID-19 vaccines are available at NO COST to you.
For more information visit cityofpasadena.net/COVID19vaccine.

PASADENA PUBLIC HEALTH DEPARTMENT

Տիարպէքիի Հայ Աւետարանական Եկեղեցին կը Վերածուի Գրադարանի



Տիարպէքիի (Տիգրանակերտ) Հայ Աւետարանական եկեղեցւոյ տարածքը, որպէս գրադարան, վարձակալուած է Թուրքիոյ Մշակոյթի եւ զբօսաշրջութեան նախարարութեան կողմէ: Հայ Աեկեղեցւոյ հոգեւոր առաջնորդը իր վրդովմունքը յայտնած է այդ կապակցութեամբ:

Այս մասին Արեւելք տեղեկութիւն ստացաւ Թուրքիոյ Հայ Աւետ. եկեղեցւոյ ներկայացուցիչ՝ Վեր. Գրիգոր Աղապալօղլուն կողմէ հրապարակուած տեսանիւթէն:

Վեր. Գրիգոր Աղապալօղլուն մասնաւորապէս ըսած է՝ Մեզի համար ասիկա խոր վէճք մըն է, որ մեծ նեղութիւն կը պատուէ մեզի: Վշտացած ենք: Քանզի մեր պետութիւնը պէտք է մտածեր անոր մասին: Ես, որպէս բողոքական եկեղեցւոյ հոգեւոր առաջնորդ, նախապէս ալ պահանջած էի, որ այդ վայրը մեզի տրուի: Կը պատկերացնէ՞ք: Մէկ եկեղեցի կայ եւ մէկ համայնք: Սակայն եկեղեցին համայնքին չի յանձնուիր, յարմար չեն գտներ, որ ան որպէս եկեղեցի գործի: Այդ հանգամանքը ոչ կրօնական եւ ոչ ալ բարոյական առումներով տեղին է: Կը դատապարտենք այդ քայլը: Պահանջած ենք, որ այդ վայրը տրուի մեր համայնքին:

Մենք յամառ կը մնանք մեր պահանջին մէջ: Ան պէտք է մեզի ետ վերադարձուի:

Թուրքիոյ Հայ Աւետ. համայնքի առաջնորդը նաեւ աւելցուցած է, 1983-ին, երբ պայմանները բարենպաստ չէին, եւ ահաբեկչական գործողութիւններու թիւը մեծ էր, եկեղեցւոյ իրաւասունները բարի մտադրութեամբ զայն յանձնեցին պետութեան: Ըսելով Վեր. պիտի չկրնանք պաշտպանել մեր գոյքը, դուք պահպանեցէք: Մի՞թէ անոնք սխալ ըրին այդ քայլով: Այժմ պետութիւնը կ'ըսէ՞ք Քանի որ եկեղեցին մեզի տրուած է, անիկա մերն է եւ կը ցանկայ մեզի վարձով տալ եկեղեցւոյ տարածքը կամ այլ նպատակներով օգտագործել զայն: Ամենաբարոյական քայլը, նման որոշումներէն հրաժարուիլն է ու այդ գոյքը համայնքին ետ վերադարձնելն է: Քանզի այդ վայրը հիմնադրամի ունեցուածքն է: Ոչ թէ նոյն վայր, այլ աղօթքի արժանացէք եւ հիմնադրամի գոյքը տէրերուն տուէք, որպէսզի անոնք ալ իրենց կրօնական պարտականութիւնները կատարեն այնտեղ: Մենք անոր համար մեր կարելիութեան սահմաններուն մէջ իրաւական պայքար ալ պիտի մղենք:

Կերպ

Շարունակուած էջ 12-էն

Լեւոնը հիմա էլ Արցախում է ծառայում: Ճկուն է «կերպ» բառը: Ամէն նեղ վիճակի մէջ իսկ ան կը մնայ «ազնուակերպ», կը պահէ իր քնարական բնոյթը: Ամենէն ցայտուն օրինակը անոր: Վարդան Յակոբեանի «Իմ երազները» քերթուածը: Ահա պատանդներ այդ նուրբ գործէն. «Իմ երազները ինձ պէս կաւից են, / Քիչ ծառակերպ են, / Քիչ քարակերպ են, / Քիչ սարակերպ են, / Քիչ դարբակ են, / Քիչ չէլ... / Իմ երազները ինձ պէս կաւից են, / Քիչ սիրակերպ են, / Քիչ տիրաբեկ են, / Քիչ ջրակերպ են, / Մի քիչ անկերպ են, / Քիչ էլ...»: Իսկ դուք վերջապէս յոգնած կը նստիք մայրաքաղաքի բացօթեայ սրճարանի մը մէջ ու կը լսէք Լիլիթ Յովհաննիսեանի «Իմ սրտին ասա» երգը: Վստահ եղէք, թէ այդ հիասթափուած սրտի խօսքերը կը նկարագրեն, թէ ինչպէս կ'ապրինք բոլորս. «Ես ոչ թէ եմ հաւաքում ու շնչում եմ / Սիրտս չի ուզում՝ մի կերպ ապրում եմ / Արցունքիս ծովում ես դեռ լողում եմ»: Մնացէք խաղաղ մինչեւ նոր յայտնութիւններ:

Շնորհաւորութիւն
Գրիգոր եւ Անժելիքա Լաչինեաններու ամուսնութեան ուրախ առիթով ՀՄՄ-ի Լոս Անճելոսի վարչութիւնը եւ Հ.Մ.Մ.ի ֆուլթոնի խումբի պատասխանատուները ու մարզիկները իրենց շնորհաւորութիւնները կը յայտնեն ամուսնացեալ գոյգի ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Կարօ եւ Սոնա Լաչինեաններուն:

www.massispost.com
Daily News Updates

Մալաթիոյ Հայոց Եկեղեցին Վերաբացուեցաւ



Կիրակի Օգոստոս 29ին, պաշտօնական հանդիսութիւնով, վերաբացուեցաւ Մալաթիոյ Թաշխորան անուանով Ս. Երրորդութիւն եղեցին ուր աւելի քան դար մը անց Ս. Պատարագ կը մատուցուէր: Օծման արարողութեան նախագահեց Թուրքիոյ հայոց պատրիարք Ամեն. Տ. Սահակ Ս. Արք. Մալաթեան: Իրեն կ'ընկերակցէին Պոլիսէն ժամանած քահանաներ, սարկաւազներ եւ դպիրներ: Ս. Պատրիարք Հօր հանդիսապետութեամբ ու ձեռամբ օծուեցաւ եկեղեցւոյ խորանի Ս. Սեղանն ու վէճ քարը: Հոսկ, կատարուեցաւ հոգե-

հանգստեան կարգ, որու ընթացքին յիշատակուեցան Մալաթիոյ երբեմնի թեմի վախճանեալ եկեղեցական սպասաւորները, մի առ մի վերջիւնուեցան ծանօթ հոգեւոր թեմակալ առաջնորդները, յիշուեցան նաեւ հանգուցեալ համայն հաւատացեալները: Արարողութեան ներկայ էր նաեւ Ասորի Ուղղափառ եկեղեցւոյ Ատրեամանի եւ շրջակայից առաջնորդը՝ Կրիկորիոս Մետրապոլիտը (Մելքի Իւրէք): Նշենք նաեւ որ եկեղեցին եւ յարակից կառուցները պիտի ծառայեն նաեւ որպէս մշակոյթի կեդրոն:

«Մեկնութիւն ժամակարգութեան»

Շարունակուած էջ 12-էն

Մեկնութեանց Ընթացքը
Նախնագոյն մեկնութիւններ են նաեւ Խաղաղական եւ Հանգստեան ժամերուն կարգերը, ուր տակաւին չէին հասած Խոսրով Եպիսկոպոսի Որդիին Ս. Գրիգոր Նարեկացիի եւ Սուրբ Ներսէս Շնորհալիի (12-րդ դար) հրաշալի մասնակցութիւնները: Կարգալ այդ երկու ժամերգութեանց բնագիրն ու մեկնաբանութիւնը առանց երկու մեծագոյն Սուրբերուն, Գրիգորին ու Շնորհալիին որոնք գերազանցօրէն պայծառացուցին իրենց հետագայի աղօթքներովն ու երգերովը: Մեծ Սուրբերուն աւելցուցած բաժնին մէջ այնքան աչքառու են Նարեկացիի «Ընկալ քաղցրու-

թեամբ» գեղահիւս աղօթքն ու Շնորհալիի «Նայեաց Սիրով» երգն ու «Հաւատով խոստովանիմ» քսանչորսամեայ հրաշալի աղօթքը:

Ձեռագիր Յիշատակարանը
Գրիգոր ամենավերջին էջը կ'ընդգրկէ ձեռագիր գրաբար յիշատակարան մը տաս տողոց, հակիրճ եւ սակայն դժուարընթեռնելի: Գրողը Տ. Յ. անուան տառերով յայտնի կը մնայ: Հայրս եղիա Արզումանեան իր ձեռագիրով այդ երկու տառերուն կից գրած է «ձեռագիրն է Տէր Յարութիւն Քահանայ Նէվրուզեան էվէրէկի»: Յայտնի է անշուշտ որ մեծ հայրս զայն առած պիտի ըլլայ Տէր Յարութիւն քահանայէն: Հնատիպ սոյն Մեկնութիւնը մեծ հօրս կտակը եղաւ մեր ընտանիքին:

ՅԱՒԱԿՑԱԿԱՆ
Հանգուցեալ Սարգիս Գուգուեանի մահուան տխուր առիթով Տէր եւ Տիկ. Ժիրայր եւ Սիմա Կիրակոսեաններ իրենց ցաւակցութիւնը կը յայտնեն ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Միսաք եւ Թամար Գուգուեաններուն եւ Տէր եւ Տիկ. Կարօ եւ Անի Պէքարեաններուն: Առ այդ \$100 կը նուիրեն «Մասիս»ին:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՇՈՓԻ ՇԱՍԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՇԱՍԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
(626) 797-7680

Մխիթարեանի Կոլային Փոխանցումը «Ռոմային» Օգնեց Յաղթանակի Հասնելու



Ֆուտբոլի Իտալիոյ առաջնութեան երկրորդ հանգրուանին Հոմի «Ռոման» հիւրընկալուելով 4:0 արդիւնքով յաղթանակ արձանագրեց «Սալերնիտանայի» նկատմամբ, իսկ Հենրիխ Մխիթարեանը դարձաւ կոլային փոխանցման հեղինակ:

Առաջին խաղակէսին դարպասի գրաւում տեղի չունեցաւ: «Ռոմայի» կազմէն երկրորդ խաղակէսի սկզբնամասին հաշիւը բացաւ իտալացի կիսապաշտպան Լորենցո Պելլերինին, որ աչքի ինկաւ 48-րդ վայրկեանին: 4 վայրկեան ետք Հայաստանի ազգային հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը ֆրանսացի կիսապաշտպան Ժորժան Վերետուին օգնեց նշանակել հիւրերու երկրորդ կողմ: 67-րդ վայրկեանին Մխիթարեանը ստացաւ դեղին քարտ, իսկ 2 վայրկեան ետք հաշիւը դարձաւ 3:0: «Ռոմայի» կազմին մէջ առաջին կողմ նշանակեց խումբի նորեկ, անգլիացի յարձակող Տեմի Աբրահամը:

70-րդ վայրկեանին Հենրիխ Մխիթարեանը փոխարինուեցաւ, իսկ խաղի վերջակէտը դրաւ Լորենցո Պելլերինին՝ 79-րդ վայրկեանին դառնալով երկրորդ հեղինակ:

ՊՍԺ-ն Յաղթեց Մեսիի Նորամուտի Խաղին

Արժենթինացի յարձակող Լիոնել Մեսին Փարիզի ՊՍԺ-ի կազմին նորամուտը նշեց «Ռեյմսի» դէմ Ֆրանսայի առաջնութեան չորրորդ հանգրուանի խաղին: ՊՍԺ-ն 2:0 հաշուով արտագնայ յաղթանակ տարաւ ֆրանսացի յարձակող Կիլիան Մբայէի նշանակած երկու կոլերուն շնորհիւ:



Քաթալոնական «Պարսելոնայի» նախկին աւագ Լիոնել Մեսին առաջին անգամ ըլլալով ընդգրկուած էր ՊՍԺ-ի յայտացուցակին մէջ եւ խաղը սկսած էր պահեստայիններէն: 34-ամեայ արժենթինացին դաշտ դուրս եկաւ 66-րդ վայրկեանին՝ փոխարինելով պրագիլացի յարձակող Նեյմարին:

ՊՍԺ-ն տարաւ չորրորդ անընդմէջ յաղթանակը եւ 12 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը:

«Պարսելոնան» Յաղթանակի Հասաւ Իր Դաշտին Վրայ

Ֆուտբոլի Սպանիայի առաջնութեան երրորդ հանգրուանին Քաթալոնական «Պարսելոնան» ընդունեց «Խետաֆէին» եւ յաղթեց 2:1 արդիւնքով:

«Պարսելոնան» խաղի հաշիւը բացաւ արագ կողի շնորհիւ: Երկրորդ վայրկեանին աչքի ինկաւ սպանացի պաշտպան Մերխի Ռոպերթոն: 19-րդ վայրկեանին քաթալոնական ակումբի նախկին կիսապաշտպան Սանդրո Ռամիրեսը նշանակեց հիւրերու պատասխան կողմ, բաց 11 վայրկեան ետք հոլանտացի յարձակող Մեմֆիս Եսայր դարձաւ առաջ մղեց «Պարսելոնային»: Ընդմիջումէն յետոյ դարպասի գրաւում չարձանագրուեցաւ:

«Քամփ Նոու» մարզադահլտին մէջ տեղի ունեցած հանդիպման ներկայ էր միայն 26543 հանդիսական:

«Ռեալը» 200 Միլիոն Եւրօ Կ'առաջարկէ Մբայէի Համար

Մատրիտի «Ռեալի» ղեկավարութիւնը վճռական է տրամադրուած ՊՍԺ-ի եւ աշխարհի ախոյեան Ֆրանսայի հաւաքականի յարձակող Կիլիան Մբայէի փոխանցումը մինչեւ Սեպտեմբերի 1-ը իրականացնելու հարցին մէջ: Արքայական ակումբը պատրաստ է 22-ամեայ ֆուտբոլիստի համար փարիզեան խումբին առաջարկել 200 միլիոն եւրօ:

ՊՍԺ-ն մերժած էր 170 միլիոն եւրոյի առաջարկը, սակայն դուրս չէ եկած բանակցութիւններէն եւ պատրաստ է շարունակել քննարկումը մինչեւ փոխանցման պատուհանի փակուիլը:

Մբայէի պայմանագիրը ՊՍԺ-ի հետ նախատեսուած է մինչեւ 2022-ի Յունիսի 30-ը:

Կրիշտիանու Ռոնալտուն Տեղափոխուեցաւ «Մանչեսթըր Եունայթըտ»

Իտալական «Եովենթուս» ակումբի յարձակող Կրիշտիանու Ռոնալտուն տեղափոխուած անգլիական «Մանչեսթըր Յունայթըդ» ակումբ: Այս մասին «Արմենպրես»-ը տեղեկացաւ Մանչեսթըր Եունայթըդէ:



Կը նշուի, որ գործարքի մանրամասներու մասին պիտի հաղորդուի աւելի ուշ:

Ռոնալտուն «Մանչեսթըր Եունայթըտի» կազմին մէջ հանդէս եկած էր 2003-2009 թուականներուն:

«Թոթենհեմը» Յաղթեց Ու Դարձաւ Առաջատար



Անգլիական «Փրեմիեր» լիգայի երրորդ հանգրուանին Լոնտոնի «Թոթենհեմը» սեփական դաշտի վրայ նուազագոյն արդիւնքով առաւելութեան հասաւ «Ուոլթֆորտի» նկատմամբ: Դաշտի տէրերու յաղթական կոլն առաջին խաղակէսի վերջաւորութեան նշանակեց քրէյացի կիսապաշտպան Հիոն-Մին Սոնը, որ 200-րդ հանդիպումը ունեցաւ Անգլիոյի առաջնութեան ընթացքին:

«Թոթենհեմը» արձանագրեց երրորդ յաղթանակը եւ 9 կէտով գլխաւորեց մրցաշարային աղիւսակը:

Անգլիոյի առաջնութեան միւս խաղերուն արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

- «Մանչեսթըր Սիթի»-Արսէնալ 5:0
- «Լիւըրսուլ»- «Չելսի» 1:1
- «Ուլվըզ»-«Մանչեսթըր Եունայթըտի» 0:1

«Ռեալը» Յաղթեց Սեւիլիայի Մէջ

Ֆուտբոլի Սպանիոյի առաջնութեան երրորդ հանգրուանին Մատրիտի «Ռեալը» Սեւիլիայի մէջ մրցեցաւ «Պետիտի» հետ եւ առաւելութեան հասաւ նուազագոյն հաշուով: Արքայական ակումբի յաղթական կողմ երկրորդ խաղակէսին նշանակեց սպանացի պաշտպան Տանիէլ Կարվախալը, որ աչքի ինկաւ ֆրանսացի յարձակող Քարիմ Պենզեմայի փոխանցումէն յետոյ:

Կառլօ Անչելոտիի գլխաւորած խումբը միաւորներու քանակը հասցուց 7-ի եւ 4 առաջատարներու մէջն է: «Պետիտը» 2 կէտով 14-րդ տեղը կը գրաւէ:

Հայաստանը 4 Մետալ Նուաճեց Եւրոպայի Պատանեկան Առաջնութեան

Լեհաստանի մէջ տեղի ունեցած ծանրամարտի Եւրոպայի պատանեկան առաջնութեան Հայաստանը նուաճեց 4 մետալ:



Գիւմրեցի Ռաֆիկ Մինասեանը 61 կգ քաշային կարգին մէջ պոկեց 114 քկ, հրեց 144 քկ. եւ երկամարտի 258 կգ արդիւնքով գրաւեց առաջին տեղը, կը հաղորդէ ՀԱՕԿ-ի մամուլի ծառայութիւնը: Գիւմրեցի Մերուժան Եղոյեանը 55 քկ. քաշային կարգին գրաւեց երկրորդ տեղը՝ 216 քկ. (97 կգ + 119 կգ):

Երրորդ մրցանակակիր դարձաւ երեւանցի ծանրքաշային Ալբերտ Թումասեանը՝ 321 քկ. (147 քկ. + 175 քկ.):

Տղաները խմբային հաշուարկով գրաւեցին երրորդ տեղը: Հայաստանի աղջիկներէն արծաթէ մետալակիր դարձաւ գիւմրեցի էմմա Պողոսեանը (81 քկ.) երկամարտի 196 քկ. (83 քկ. + 113 քկ.) արդիւնքով: Ան նաեւ սահմանեց Եւրոպայի մինչեւ 15 տարեկան աղջիկներու մրցանիշ:


Քալիֆորնիոյ Նահանգապետի Պաշտօնանկուրեան Քուէարկութիւն

14 Սեպտեմբերին

Ստուգեցէ՛ք ձեր նամակատուփը: Քուէաթերթիկները ճամբա'ն են:

Քուէաթերթիկները կրնաք նամակատարով վերադարձնել
նախապէս վճարուած թրոշմաթուղթով՝ զայն առաքելով ապահով
նամակի տուփի մը մէջ նետելով կամ անձամբ:

ՁԵՐ ՔՈՒԻԷՆ ՁԵՐ ՁԱՅՆՆ Է



Իմացէք, թէ ինչի՛ կարիքը
ունիք, այսօ՛ր:

vote.ca.gov/